

ՆՈՐ ԿԵԱՆՔ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՌՈՒՍԻՈՅ ՆԵՐՔԻՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆՌԻԹԻՒՆԸ

Ուսումնասիրութեան մը մէջ զոր Մերքիչը տը Ֆասնս հանդէսը վերջերս հրատարակեց, Պ. Ժիւլիէն Լըքէր հանրային կարծիքին առջեւ կը դնէ քաղաքականութիւնը որով Ռուսիա այսօր կը նկրտի Ֆինլանտայի ժողովուրդը կապտել իր առանձնաշնորհումներէն, որոնց շնորհիւ մինչեւ հիմակ կ'ապրէր ան խաղաղ ու երջանիկ, Ֆինլանտայի մէջ ալ սկսել ուսացուցման գործը որ երկաթէ ձեռքով մը առաջ կը տարուի Պալթիկեան նահանգներուն, Բոլոնիոյ եւ Կովկասի մէջ:

Յայտնի է թէ Ֆինլանտա ցեղով ու բարքով բոլորովին սարբեր է Ռուսիայէն, թէպէտ ուս կայսրութեան մաս կը կազմէ: Ան որ արդէն անգամ մը Գերմանիոյ կամ Աւստրիոյ սահմանագիւն անցնելով Ռուսիա մտած եւ զգացած է անողոք ձեռքով մը կառավարուած հողի մը վրայ ոտք դնող ազատ մարդուն անձկութիւնը եւ երկիւղը, թեթեւացնող զարմանք մը կը զգայ երբոր Ֆինլանտա մտնէ: Եւրոպացի ինքզինքը օտար չի զգար այդ ազատամիտ եւ ուսեալ ազգին մէջ, որ մարդկային օրէնքներով կը կառավարուի. ազատութեան օգ մը կը շնչէ հոն: Մայրաքաղաքը, Հելսինկֆոր, հանդարտ է. բարեխիղճ եւ իմաստուն վարչութիւն մը հանրային պաշտօնատնեւրուն կանոնաւոր եւ զգուշաւոր գործունէութիւնը կը տընօրինէ: Հելսինկֆորի մէջ՝ մարդ Սթոքհոլմի փողոցներուն քիչ մը ցուրտ խաղաղութիւնը կը գտնէ, բայց բնաւ Բեդրպուրկի ահոնքի ու անձկալի լուծիւնը, ուր Եւրոպացիին շունչը կը բռնուի: Բեդրպուրկ ընդարձակ ու գեղեցիկ է, եւ սակայն մարդ կը խղզուի հոն, որովհետեւ քեզի եղած ընդունելութիւնը կասկածոտ է, որովհետեւ մաքսատան եւ ոստիկանութեան վարուելու կերպը ծայրահեղ և վիրաւորիչ է, և որովհետեւ ժողովրդին երկու տարրերէն՝ մին ամբարտաւան ու գոռոզ է եւ միւսը ստորկացած:

Ոչ մէկ բան խորթ կուգայ եւրոպական դատարար-

կութիւն ստացած մարդուն որ Ֆինլանտա կը մտնէ: Հոն մարդ չի գտներ ո՛չ խուզարկու ոստիկաններ, ո՛չ մաքսաւորներ որոնց ձեռքը ամէն բան կը քրքրէ, մինչեւ իսկ մըտերմական թղթերը եւ որոնք կ'աշնչացնեն զիրք, տետրակ, լրագիր: Ոստիկանութիւնը քեզի բան մը չի հարցնիր, երկիրը առջիկ բաց է: Գեղացին, բանւորը, ձրկնորսը՝ թշուառ կերպարանքը չունին ուս աշխատաւորին, որուն դիտակցութիւնը կամովին թմրեցուցած են, յաղթանակել տալու համար քաղաքականութիւն մը որ ժողովրդին տգիտութեան վրայ հիմնուած է: Ֆինլանտական հողին վրայ, աղքատութիւնը ակներեւ կը տեսնուի, բայց այդ աղքատութիւնը արտաքին արժանաւոր կերպարանք մը ունի: Հողը քիչ բան կուտայ զինքը մշակող մարդուն. օրէնքը, բնագիտական, այդ մարդը յարգանքով կը շրջապատէ, անոր ուսում կուտայ, զանի քաղաքացիի աստիճանին կը բարձրացնէ եւ հանրային գործին մասնակից կ'ընէ՝ լոկ տուրք վճարել տալէ տ րոք եղանակով մը: Տուրքերն ալ չափազանց չեն: Այդ երկրին մէջ երկար ատեն բնակելու պէտք չկայ տեսնելու համար թէ ամէն աստիճանի պաշտօնատարը պարզ եւ ուղիղ է, առանց ստրկութեան՝ իր մեծերուն հանդէպ, առանց բռնաւորութեան՝ իր ստորադասներուն նկատմամբ. իր պարտքը կը կատարէ, առանց չափը անցնելու, պէտք եղած ատենը միայն կը միջամտէ, հանդակատար է՝ առանց փոխարինութեան: Ֆինլանտացի պաշտօնատարը, հոգացու ու պարկեշտ, բոլոր յատկութիւնները ունի սկանտինաւեան պաշտօնատարին, որ օրինակելի է:

Ֆինլանտա, որ երկար ատեն Շուէտի տիրապետութեան տակ գտնուած է, անոր բարքերը առած ու պահած է, հետեւելով այն ազատական գաղափարներուն որոնք զարեւ մը ի վեր Եւրոպայի մէջ տարածուած են, եւ հետըզհետէ աւելի ուսմկապետական ուղղութիւն մը տալով իր հանրային կարգուսարքին: Ֆինլանտայի մէջ, ոչ մէկ քաղաքացի, ինչ գասակարգի ալ պատկանի, ընդամին առանձնաշնորհում մը չի վայելեր, եւ ոչ մէկ նախապաշարուս իրարմէ կը բաժնէ տարբեր ծագում ունեցող մարդիկը: Արժանիքը և կրթութիւնը միակ պայմաններն են վարչութեան մէջ ընդունուելու և յառաջանալու: Ազնուական դասակարգը ըստաժը լոկ բառ մըն է: Այս վիճակը, որ անսխալապէս ճամբորդին աչքին կը զարնէ, բո-

լրորովին հակապատկերը կը կազմէ ուսական ընկերու-
թեան սովորութեանցը:

Ֆինլանտայի մէջ կրթութիւնը ամէն քաղաքացիի
մատչելի դարձուցուած է: Տգիտութիւնը ջնջելու համար
ժողովրդին ամէնէն ստորին խաւերուն մէջ, մեծ զոհողու-
թիւններ յանձն առնուած են: Հակառակ սա մեծ խոչըն-
դին թէ այդ 2,500,000 հոգիի ժողովուրդը լայնածաւալ
երկրի մը վրայ տարածուած է ցանուցիր, ժողովրդական
վարժարաններ ամէն կողմ կան, ինչպէս Շուէտի եւ Նոր-
վեկիոյ մէջ, և անուաներուն համեմատութիւնը այնչափ
քիչ է որչափ այդ երկու երկիրներուն մէջ, որոնք, վիճա-
կագրութեան նայելով, նախնական կրթութեան մէջ առա-
ջինն են, մինչդեռ Ռուսիա էն յետինն է եւ հոն կը մնայ
կամովին, սկզբունքով: Կրթութեան փափաքը այնքան զօ-
րեղ է Ֆինլանտայի մէջ որ, հիւսիսային գաւառներուն
մէջ— ուր գիւղերը հազուադէպ են, շատ քիչ բնակիչ ու-
նին եւ իրարմէ այնչափ հեռու են որ գարոցներ հիմնելը
կարելի չէ— ուսուցիչներ անդուլ անդադար պտոյտի մէջ
են, այցելելու համար իւրաքանչիւր գիւղ, ուր մէկ քանի
շաբաթ կը մնան և տղոց նախնական դասեր տալէ յետոյ
կ'անցնին միւս գիւղերը: Ռուս ժողովրդին վրայ, որ կա-
մովին լքուած է, Ֆինլանտացի ժողովրդին գերազանցու-
թեան մէկ ակներեւ օրինակը սա է. Ռուսիոյ մէջ, 1000
նոր զինուորի վրայ, իբր 750ը կարգալ—գրել չեն գիտեր,
մինչդեռ Ֆինլանտա 1000 զինուորի վրայ հազիւ 3էն 5ը
կան որ անուս ըլլան: Այս թուանշանները ցոյց կուտան
ուսու եւ ֆինլանտական բարեբերուն անհաշտելիութիւնը, և
շատ լաւ կը բացատրեն թէ, ֆինլանտացիները որչափ
սերտիւ կապուած են իրենց ինքնօրինութեանը, որուն
չնորհիւ կրցած են զարգանալ՝ եւրոպական իտէլիին
համաձայն: Եթէ Ֆինլանտայի պէս պզտիկ եւ աղքատ
երկիր մը այն ինքնօրինութիւնը չունենար, պիտի չլրնար
ի պոլս հանել իր յառաջդիմութեան գործը: Այդ ինք-
նօրինութեան շնորհիւ որ իրեն միջոց կուտար իր գաւազ-
ները սերտիւ իրարու կապուած պահելու, զանոնք կրթե-
լու, ուշիմութեամբ և փորձառութեամբ օժտելու, արու-
թեամբ ոգեւորելու: Ֆինլանտա կրցած է բարոյական ոյժ
մը ըլլալ, որ իր տեղը ունի Եւրոպայի պզտիկ ազգերու
խմբին մէջ:

Ֆինլանտայէն մեկնելուն ճամբորդը կ'անցնի Ռուսիոյ
պալթիկեան նահանգներէն, ուր ահա ուսացուցման գոր-
ծը ծայրայեղ խստութեամբ առաջ կը տարուի տասը տա-
րիէ ի վեր, տակնուվրայ ընելով սովորութիւնները, ջնջե-
լով կարգուսարքերը, խորտակելով ո՛ր և է զարգացման
յոյս, և կործանելով Տորբադի գերմանական հզօր հա-
մալսարանը, որ ատենօք վառարան մըն էր բարձր և ա-
զատ ուսումնականութեան, և ուսկից գերմանական բրո-
ֆէսորները վնասուեցան. անոնց յաջորդած է այժմ ուս
լեզուով եւ խիստ մաղէ անցած կրթութիւն մը, և ա՛լ մարդ
չի յաճախեր այդ համալսարանը:

Այդ ծանր ձեռքով տիրապետութիւնն է որ կը սպառ-
նայ հիմակ Ֆինլանտայի, եւ տարիէ մը ի վեր սկսած են
զայն գործադրել:

* * *

Ֆինլանտայի ինքնօրէն սահմանադրութիւնը ամբօ-
րէն հաստատուած էր, եւ բանութեան առջեւ միայն կըր-
նար տեղի տալ: Չարին 1899 փետրուար 15ի բիրտ
հրովարտակը այդ բանութեան առաջին նշանը տուաւ:

Ֆինլանտա մինչև 1808, Շուէտի մաս կը կազմէր, բայց
իր ինքնօրինութիւնը ունէր: Երբոր 1808ին Ռուսիա վերջ-
նապէս իրեն միացուց Ֆինլանտան, Ալեքսանդր Ա տեսաւ
թէ ինքնօրինութիւնը անհրաժեշտ էր այդ երկրին կեան-
քին, և զանի կարող դատեց ինքզինքը կառավարելու:
1808 մայիս 5 թուակիր յայտարարութեամբ մը, հոչա-
կեց թէ երկրին հին օրէնքները սրբադատութեամբ պիտի պահ-
պանուէին, և յաջորդ տարին ֆինլանտական ընդհանուր
ժողովը գումարեց եւ երկրին ինքնօրինութիւնը ճանչ-
ցաւ:

Նիքոլա Ա, գահը ելլելուն, 1825 դեկտեմբեր 12
թուակիր յայտարարութեամբ մը հաստատեց ինքնօրի-
նութիւնը: Բայց այդ քմահաճ, բուն և հրամայող նկա-
րագրի տէր ինքնակալին օրով, Ֆինլանտայի մէջ տեսակ
մը վախ կար միշտ սահմանադրութեան պահպանմանը
մասին: Նիքոլա Ա երբեք ի նիստ չհրաւիրեց երկրին ա-
ւագածողովը: Իր յաջորդը, Ալեքսանդր Բ կայսրն էր որ
անմոռանալի գեր մը կատարեց երկրին պատմութեան մէջ:
1863ին, ինք անձամբ բացաւ աւագածողովին նստա-
շըրջանը և Ֆրանսերէն լեզուով ատենաբանութիւն մը
ըրաւ: Յետոյ եկաւ Ալեքսանդր Գ որ հանդիսաւորապէս
ճանչցաւ մեծ—ղջութեան կրօնքը, կաղմական օրէնքները
և առանձնաշնորհութիւնները:

Ֆինլանտացիները կը յուսային թէ արդի Չարին տի-
րապետութիւնը իրենց աղիտաբեր պիտի չըլլար: Վստա-
հութիւնը ունէին Նիքոլա Բի տուած խօսքին: Արդարեւ,
գահը ելլելուն պէս, Նիքոլա Բ 1894 նոյեմբեր 6ի
յայտարարութեամբ կը խոստանար անխախտ ու ան-
վըրժար պահպանել երկրին սահմանադրութիւնը:

Ու ահա յանկարծ, 1899 փետրուար 3ի յայտարա-
րութեամբ, Չարը ոտնակոխ կ'ընէ այդ սահմանադրութիւ-
նը, և Ֆինլանտան կը զրկէ իր վայելած առանձնաշնոր-
հութիւնէն: Այդ նոր յայտարարութեան համաձայն, այ-
սուհետև Չարը ինքզինքին իրաւունք կուտայ երկրին ընդ-
հանուր ժողովին քուէարկած օրէնքները մերժելու, ու
Ֆինլանտայի ընդհանուր կառավարիչը, որ ուսու կառա-
վարութիւնը կը ներկայացնէ, իրաւունք պիտի ունե-
նայ հարկ դատած օրէնքները հոչակելու երկրին մէջ:

Այս բանաբարութիւնը՝ արդիւնքն է յետադիմական
չարժուիւն որ Ռուսիոյ մէջ երևան եկած է: Ռուս ժողո-
վրդին մեծամասնութիւնը հաշտ աչքով չէր նայեր Ֆին-

լանտայի առանձնաշնորհումներուն։ Մարդ կրնար ենթադրել թէ Ռուսիոյ մեծամասնութիւնը շահունք Թինւանտացի ժողովրդին ազատութիւնը հռչակելու, այն յոյսով թէ այդ ազատութիւնը, փրկարար օրինակի մը պէս, օր մը Ռուսիա թափանցէր։ Բայց այդպէս չէ բնաւ։ Եւրոպացիին սխալ գաղափար մը ունի Ռուսերուն մտածելու եղանակին վրայ։ Ռուսիան դատելու չէ այն Ռուսերէն զորոնք մեր մէջը կը տեսնենք, որոնք անմիջապէս եւրոպական կերպ մը կ'առնեն։ Ռուսիա գացողը բուն Ռուսը կը տեսնէ, որ, օրինակի համար, քեզի բացատրելու կ'ելլէ թէ Ալեքսանդր Բ սխալ մը ըրաւ ճորտերը ազատագրելով։ Գաղափար մը տալու համար ոուս ինքնակալին գիտակցութեան մասին, որ՝ կ'ըսեն՝ եւրոպական կրթութիւն մը ստացած է, որ ազատամիտ կը կարծուէր և ուսկից մեծ բարենորոգումներ կը սպասէին։ Նիքոլա Բ, անցեալ տարուան համալսարանական խոռվութեանց ատեն, մտադիր էր ճիշդ տարի համալսարանները փակել, այսինքն ուսում զլանալ ամբողջ սերունդի մը, որպէս թէ կրթութիւնը շնորհք մը ըլլար զոր կարելի ըլլայ գրչի հարուածով մը ջնջել։

Նիքոլա Բ ոչ միայն օ է և է ազատական բարենորոգումի գործ չդրաւ, այլ եւ, իր օրով, յետադիմական կուռակցութիւնը բարձրիզուեալ է։ Համասլաւեան բոլոր ուժերը յարձակեցան Թինւանտայի կարգուսարքերուն եւ, վերջին տարիներս, ոուսական հանդէսներն ու օրագիրները որոնք կը համարձակէին զովիւ, պաշտպանել կամ լոկ բացատրել այդ կարգուսարքերը, խիստ յանդիմանութիւններ լսեցին։ մէկ քանին մինչև իսկ երկու անգամ սպառնական ազգարարութիւն ստացան գրաքննութենէն, ու յայտնի է որ՝ երրորդին՝ թերթը կը ջնջուի։ Այդ հանդէսներն ու լրագիրները այնչափ սակաւաթիւ էին որ մատի վրայ կը համրուէին։ Այսօր, լուրթեան դատապարտուած են, եւ խօսքը մնացած է միայն այն թերթերուն որոնք «անօրինութիւններ» կը պահանջեն Թինւանտայի կարգուսարքերուն դէմ։

Այն մարդը որուն ազդեցութիւնը ամէնէն աւելի վրնասակար եղած է Ֆինլանտացիներուն, ծերունի եւ հռչակաւոր Բոպիէտոնոցեվի է, Ռուսիոյ մէջ յետադիմութեան հոգին եւ ներշնչողը Ալեքսանտր Բի մահէն ի վեր։ Կ'ըսուի թէ Ալեքսանդր Բի եղբրական վախճանը այնչափ տակնուվրայ ըրած էր իր որդին եւ յաջորդը, որ սա կը մտադրէր հրաժարիլ իր միահեծան իշխանութենէն եւ երկիրը օժտել նուազ բարբարոս սահմանադրութեամբ մը։ Ալեքսանդր Գ կը զոդար իրեններուն ապագային, իր իշխանութեան, իր անձին համար։ Ան ատեն է որ Բոպիէտոնոցեվ, Չարին երկիրները հանդարտեցնելով և զանի խրախուսելով ամուր պահելու աւանդութիւնը, սկսաւ հզօր դեր մը կատարել։ Սինօզին պրօկուրօրը քիչ քիչ Ռուսիոյ էն ազդեցիկ մարդը եղաւ և է այսօր։ Բոպիէտոնոցեվ քսան տարիէ ի վեր հեղինակաւոր ձայնով մը

կը քարոզէ թէ Եւրոպայէն եկած գաղափարները վատառողջ են, թէ տգիտութիւնը ազգի մը երջանկութիւնը կը կազմէ, թէ ժողովրդի մը ստրկական հնազանդութիւնը՝ իր պահպանման երաշխաւորութիւնն է, թէ պէտք է ամէն միջոցով պահպանել այդ տգիտութիւնը, խեղդել այն սխալ մարդասիրութիւնը որ խոնարհները կրթել կը փափաքի, ջնջել օտար տարրերը որոնք ներհակ գաղափարներ կը տարածեն, եւ կեանքի ու մահուան իրաւունք ունենալ ժողովրդին վրայ ամէն անգամ որ հպատակները իրենց բուն շահը անտեսելով նորութիւն ու լոյս խնդրեն։ Սէն-Սիմոն, Սպանիա ճամբորդելուն, կ'ըսէր Հաւատաքննութեան համար թէ «Կ'ատէ ամէն լոյս, ամէն գիտութիւն, մտածելու ամէն եղանակ։ Տգիտութիւն միայն կ'ուզէ, ու ամէնէն թանձր տգիտութիւնը՝ Քրիստոնեաներուն մէջ իր փնտածը՝ ապուշութիւնն է, և ինք կը նկրտի ատրկա հաստատել ամէն կողմ, իբր անոնց փրկութեան ամէնէն ապահով միջոցը։» Այս խօսքերը ճիշտ ու ճիշտ կը պատշաճին Բոպիէտոնոցեվի, որ երեակայութենէ զուրս պահպանողական է։ Իրեն համար, Թինւանտացիները կայսրութեան ժանտախտն են։ Իրենց կրթութիւնը ոճիր մըն է, իրենց ազատութիւնը՝ ապերասան թոյլտուութիւն մը, եւ իրենց բարքերը՝ գայթակղութիւն։

Այսպիսի վարդապետութեան մը բնական զօրավիզն է Ռուսիոյ մէջ զինուորական տարրը, որ ազնուապետական և առանձնաշնորհեալ տարրն ըլլալով, ուրիշ սկզբունք չունի բայց եթէ իր շահերուն պաշտպանութիւնը։ Իրեն հակառակորդ ունի մտաւորական տարրը, բայց ասիկա այնչափ ճզմուած է որ չի կրնար անոր հետ զուեալու։ Չինուորական տարրն է որ Թինւանտան հարուածեց, պատրաստելով զինուորական օրինագիծը։ Այդ օրինագիծին համաձայն, տարուէ տարի 6000 նոր զինուոր պիտի երթան իրենց երկրէն զուրս ծառայեն ոուսական նահանգներուն մէջ, և ասոր համար Թինւանտայի պզտիկ ելմտացոյցը 10 միլիոն ֆրանքի բեռի մը տակ պիտի մտնէ։ Այդ օրէնքին նպատակն է միացեալ ժողովրդի մը զաւակները ցանուցիւր ընել, զանոնք պարտաւորել զորածնելու ոուս լեզուն որ իրենց համար անօգուտ է, զանոնք խիստ հսկողութեան տակ առնել, և կամայ ակամայ զանոնք ձեւակերպել եւ կակուզ ու իրենց աւանդութիւնները մոռցող հպատակներ դարձնել։

Ֆինլանտացիները իրենց սպաննացող զժառգութեանց նախազգացումը ունեցան երբոր, 1898ի ամբան իմացան թէ Ֆինլանտայի ընդհանուր կառավարիչ անուանուած է Պոպրիքոֆ զօրավարը։ Այս անուանումը նշանակելի էր։ Չօրավար Պոպրիքոֆ պալթիկեան նահանգներուն անողոք ու անխիղճ ոուսացնողը եղած է։ Ֆինլանտայի մէջ, շուտով ցոյց տուաւ իր թշնամական զգացումները և Բեզրպուրկէն բերած հրահանգներուն բնութիւնը։ Ինք հոն կը հասնէր առանց բան մը հասկնալու Ֆինլանտական կարգուսարքերէն, կը կարծէր թէ ոուս նահանգապետի

մը բոլոր իրաւունքներն ու առանձնաշնորհումներն ունի: Գծուարութեանց բաղիւնեցաւ զորոնք մտքէն անցուցած չէր: Կը զարմանար թէ ֆինլանտայի պաշտօնատարներուն տուած հրամաններուն, անոնք կը պատասխանէին թէ երկրին օրէնքներն ու սովորութիւնները հակառակ էին այդպիսի հրահանգներու: Կը զայրանար երբ Երեւանի տար կ'ըսէր թէ իր առաջարկութիւններուն գործադրութիւնը թողաւորելէ առաջ՝ հարկ է որ զանոնք ուսումնասիրէ կամ Աւագածոցովին վաւերացմանը ենթարկէ: Կը գայթակղէր երբ հետը կը վիճարանէին, երբ իր միջամտութեան ապօրինութեանց զէմ առարկութիւն կ'ընէին: Իր տեսակետովը, ֆինլանտա ռազմաբանութիւն կ'ընէր, և 1899 փետրուար 3ի յայտարարութեանն ընչ ետքը, Պոպրիքոֆի գործարքը կայտնէր կը խնդրէր պաշարման վիճակ հրատարակել, որով բացարձակ իշխանութիւն պիտի ունենար: Միտքը չէր կրնար սղմիլ թէ ինչպէս ոստիկանութեան, դատարաններուն եւ ելուստքին բացարձակ տէրը չէ: Բայց Նիքոլա Բ շանսաց անոր բաղձանքին, գտնուով որ հարկ չկար ֆինլանտան մղել յուսահատութեան մը սը կարող էր ներքին գծուարութիւններ յարուցանել Ռուսիոյ:

Մակարի յայտարարութիւնը Պոպրիքոֆի իրաւունք կուտար հարկ եղած օրէնքները առաջարկելու ֆինլանտական ժողովին և «տնօրինութիւններ» ձեռք առնելու: Երեւանի տար մերժած էր անսր խնդրած զ ընդհանրը սրով կ'ուզէր ուսական ազգեցութիւնը տարածել հոն: Նախ կը խնդրէր աստեղէն լրագիր մը որուն համար 80,000 ֆրանքի տարեկան նպաստ կ'ուզէր. յետոյ ուս եկեղեցիներ հաստատել և ուս քահանաներ կարգել, որոնք իր գաղտնի ոստիկանները պիտի ըլլային: Երեւանի տար մերժումին վրայ, Չարը հրովարտակով մը հրամայեց լրագրին հաստատութիւնը, եւ որպէս զի գոնէ մէկ քանի ընթերցող ունենար ֆինլանտայի ժողովրդին մէջ, կառավարիչը բոնի բաժանորդ գրել տուաւ ֆինլանտական վաշտերուն սպաները: Տեղական մամուլը բնականաբար Պոպրիքոֆի գործարքին մեծ զոհը եղաւ: Անոնց նկատմամբ անանկ պահանջումներ ունեցաւ որ կ'ապշեցնեն: Բաւական թուով լրագիր ջնջելէ կամ գաղտնեցնելէ յետոյ, իշխանութիւն ուզեց լրագիրներու տնօրէնները պաշտօնագործի ընելու: Կ'ըսէր թէ, ատով, չարամիտ լրագիրները ջնջելու դժնդակ հարկէն կ'ազատէր: Ինչ որ չարամիտ էր իր աչքին, սա էր, օրինակի համար, որ լրագիրներ իր հրահանգներուն կամ առաջարկներուն դիմացը կը գնէին անոր հակառակող ֆինլանտական օրէնքը կամ սովորութիւնը: Ֆինլանտական մամուլին վայելած բաւական ընդարձակ ազատութիւնը այսօր ջնջուած է, եւ կառավարիչը դեռ գոհ չէ: Վերջերս Երեւանի տար կ'առաջարկէր որ երկրին ութ նահանգներուն իւրաքանչիւրը մէկ լրագիր մը մինակ ունենար, որ բնաւ չզգաղէր քաղաքականութեամբ եւ որուն գործը ըլլար Ռուսիոյ նկատմամբ բար-

եացակամ զգացումներ տարածել ժողովրդին մէջ: Պոպրիքոֆի միանգամայն կ'ուզէ լրագիրներուն արդիւնք աւագածոցովին վիճարանութեանց հրատարակութիւնը:

Մամուլը, գրաքննութեան խստութենէն կրած նիւթական վնասները մեղմելու համար, իրեն օշտին հանդէսներ կազմակերպած էր, սրոնք բնականաբար ժողովրդին համար առիթ մը եղան անոր նկատմամբ ունեցած սէրը յայտնելու: Այս գործը պերճախօս կերպով ցոյց կուտար ազգին միաբանութիւնը: Ասիկա հանելի չեղաւ կառավարիչին, որ հրովարտակ մը հնդրեց տրամադրող որ ոչ մէկ հանգէս կազմակերպութիւն առանց իր թողտուութեանը: Իրաւ է որ Երեւանի տար մէկն անգամ կը մերժէ գործարք Պոպրիքոֆի առաջարկները, բայց ան ասեմ անիկա զէպի Բեկրպուրկ կը գտնայ, պատճառ բերելով թէ հանրային խաղաղութիւնը վտանգի մէջ է, և ամէն անգամ, ընչ մը աւելի իշխանութիւն ձեռք կը բերէ: Կը տեսնուի թէ ազգային զգացման այս ամէն վիճարարութիւնները կեանքը ինչքան տխուր, վարանոտ ու անստոյգ կը դարձնեն երկրի մը մէջ որ ազատութեան վարժուած էր և անից կ'օգտուէր իր չարագամներ համար: Ու դեռ ասոնք նախադուռն են բուն բռնապետական օրէնքներուն, ինչպէս զինուորական օրէնքը, ֆինլանտական մաքսատան ջնջումը, ֆինլանտական զրամին տեղը պիտի հաստատուի, որոնք Ֆինլանտան պիտի կործանեն:

Այս ամէնը ցոյց կուտայ Ռուս ներքին քաղաքականութեան վարուելու եղանակը, ու միանգամայն Ռուսերուն մտածելու կերպը անկախ ու եւրոպական ոգով սահմանադրութեան մը հանդէպ, որ իրեն եղեան մը կը թուի, հրէշութիւն մը, քաղաքական գայթակղութիւն մը, որուն չեն կրնար հարգուած իրենց կայսրութեան մէջ: Ազատական ոգին գոյութիւն չունի Ռուսիոյ տէրերուն մտքին մէջ:



Ֆինլանտա կը տառապի ու աւելի պիտի տառապի եթէ իր բռնաւորները ընդհուպ ետ չկենան իր ազգային կեանքին շարժմանը հակառակելէ: Բայց, ինչպէս կ'ըսէ իրենց թորեչիուս բանաստեղծը, «Ազգ մը որ այնչափ փորձութիւններէ յետոյ կենդանի ու առոյգ մնացած է, չի մեռնիր, ցորչափ ինքզինքին գիտակցութիւնը ունենայ»: Ի չգոյէ պաշտպանութեան նիւթական միջոցներու, այդ գիտակցութիւնը ոյժ մըն է: Անով կրնայ կրաւորաբար դիմադրել, առանց լուծուելու: Ֆինլանտացին հանդարտ, կորովի, համբերատար է. կրօնասէր է, գիտէ իր քաղաքացիի պարտականութիւնները: Բայց Ռուսիոյ զէմ ֆինլանտացի ժողովրդին զիւսուոր ոյժը՝ այն բարոյական կապն է որով իրարու կապուած են ընկերուսբեան բոլոր դասակարգերը: Ռուս կառավարութիւնը չը կրցաւ ու պիտի չկրնայ երկպառակել ֆինլանտան. ամ-

բողջ ազգն է որ իրեն կը դիմադրէ:

Չարին յայտարարութենէն յետոյ, առաջին պատգամաւորութիւն մը, որ մէկ քանի ձերակուտականներէ բաղկացած էր, Բեդրպուրկ գնաց եւ ունկնդրութիւն մը խընդրեց Չարէն, որ պատասխանել տուաւ թէ ունկնդրութեան պէտք չկայ: Յետոյ, փետրուար 22ին, ուրիշ պատգամաւորութիւն մը գնաց Բեդրպուրկ, և առջինին բաղդին վիճակեցաւ: Չարը խնդրեց պատգամաւորներէն որ «գործերնսն երթան»: Վերջապէս, մարտ 5ին, ուղերձ մը խմբագրուեցաւ զոր երկրին բոլոր գիւղախմբերուն ժողովները վաւերացուցած էին եւ որ, մէկ շաբթուան մէջ, 522,931 հոգիէ ստորագրուած էր: Ուղերձը Բեդրպուրկ տարաւ 500 հոգիէ բաղկացած պատգամաւորութիւն մը, իւրաքանչիւր գիւղախումբ մէկ պատգամաւոր դրկելով: Չարը ցուրտ արհամարհանք մը ցոյց տուած էր առջի երկու պատգամաւորութեանց մասին, բայց այս երրորդը այնչափ պատկառարկու և անակնկալ էր սր զայրոյթ առաջ բերաւ: Իրեն անմիջապէս ազգարարուեցաւ անյապաղ մեկնել Բեդրպուրկէն, ուր իրենց արգիւտած էր բընակի: Թէ՛ պալատը եւ թէ՛ նախարարները տեսան թէ Ֆինլանտան միացած էր և թէ զժուար էր այդ պայմաններուն մէջ զայն երկպառակել:

Ռուսիա, երբոր ուսացնելու ձեռնարկած է միշտ դեղացիին դիմած է: Բայց ֆինլանտացի գեղացին ո՛չ պալատիկեան եւ ո՛չ բոլոնացի գեղացիին տգիտութիւնը ու դիւրահաւանութիւնը ունի. կարգացած է, ինքզինքը կը կառավարէ, ազատ է, իր գիտակցութիւնը իրաւը սուսէն կը զանազանէ, ուստի զիտէ ինքզինքը պաշտպանել, հետևաբար բնաւ ականջ չի գներ ուս փերեզակներուն որոնք գեղէ գեղ կը պտըտին՝ ուս օրէնքները գովելով եւ աշխատելով ապացուցանել ֆինլանտական օրէնքներուն բնականութիւնը:

Ջինուորական օրէնքով, կը յուսան ֆինլանտային յաղթել: Չարը զեռ այդ օրէնքը հոչակած չէ ֆինլանտայի համար, բայց եթէ հոչակելու ըլլայ, Ռուսիա մեծ օգուտ մը պիտի չբաղէ անկից: Ֆինլանտայի Երիտաւարութիւնը գաղթելու պիտի ստիպէ, ուրիշ ոչինչ: Գիւղի մը մէջ, այս տարուան զինուորագրութեան համար 41 երիտասարդ արձանագրուած էին, եւ երբոր կոչը եղաւ, ոչ մէկը պատասխանեց: Այդ յուսահատ պատանիները Ամերիկա գաղթած էին, ուր լաւագոյն օրերու կը սպասեն իրենց երկիրը վերադառնալու համար: Գանատայի մօտ ֆինլանտական գաղութ մը հիմնելու խօսք կայ: Գաղթողներուն թիւը, որ տարին 1000ը չէր անցնէր, այնօր տասնապատկած է: Չարը, միամտութեամբ մը որ կը զարմացնէ— ենթադրելով որ գործին մէջ միամտութիւն կայ— քննութիւն մը հրամայած է այդ խմբովին գաղթականութեան պատճառներուն մասին:

Ֆինլանտայի ղեկըրը յառաջ բերին ցոյց 5 մը ուր, առաջին անգամը ըլլալով, Եւրոպայի ընտրեալ լղասը,

իրեն պատշաճ գործօն զերը ստանձնելով, վախկոտ դեւանագէտներէն առաջ անցաւ՝ ժողովուրդներուն համեարաշխութիւնը հաստատելու համար: 1899 յունիս 26ին, Բեդրպուրկ գնաց միջազգային պատգամաւորութիւն մը, որուն նախագահն էր ֆրանսայի Երեւոյտին անգամ Պ. Թրարիէս եւ որ Չարին կը տանէր 1058 նշանաւոր Եւրոպացիներէ ստորագրուած խնդրագիր մը, որ պատկառելի հատոր մը կը կազմէր: Ժամանակակից մշտքին վրայ գերակշիռ ազդեցութիւն ունեցած իմաստասէրներ, ինչպէս Հէրպէրդ Սթենսէր և Վիրխով, մեծ պատմաբաններ՝ ինչպէս Կաստիլ Բաոի և Մոմսէն, փառայեղ մատենագիրներ՝ ինչպէս Իպսէն, Անագոլ Ֆոանս և Չուլա, ստորագրած էին: Այս պատուիրակութիւնը յանկարծակիի բերաւ ուս նախարարները, որոնք չէին գիտեր ի՛նչ ընդունելութիւն ընել անոր և իրարու կը զրկէին զանի: Չարը իր Բէզերնօֆի պալատին մէջ շուրս մնացած էր, բայց վերջապէս շաբթ մը սպասցնելէ յետոյ, լուր դրկեց թէ չէր կրնար ընդունել գիրենք: Ըստ որում կարելի եղած չէր խնդրագիրը յանձնել Չարին, պատմական այդ կարևոր պաշտօնագիրը հանդիսաւորապէս յանձնուեցաւ Լա Հէյի արքայական մատենագարանին գիւսնատան:

Նիքոլա Բ, իր հայրերուն կնքած դաշնագրութիւնը խորտակելով, հարստահարիչ մըն է այսօր ֆինլանտայի համար, ու այդ յոյլ կայսրը, ողորմելի Բոպիէանօսցե վին ազդեցութեան տակ, տխուր էջ մը աւելցուց ուս պատմութեան մէջ: Երբոր, ամէն խօստուժ արհամարհելով, Չարը ինք օրէնքներ հոչակէ ֆինլանտայի համար եւ զանոնք բռնի գործադրութեան դնէ, ինչ պիտի պատահի: Մօտիկ ապագան ատիկա ցոյց պիտի աայ մեզի:

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԷՋԵՐ

ԾԱԳՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽԵՂԻՆ

Ե.

Նոր Կեսանքի յուլիս 15ի թիւին մէջ ամփոփելով Հարստահարութեանց քննիչ երկրորդ Յանձնաժողովին 1876ի տեղեկագիրը, նկատողութեան առից մասնաւորապէս հողային խնդիրներու վերաբերեալ կէտերը. եւ այս առթիւ կ'ըսէինք « Հայ ժողովուրդը իր բնիկ երկրին մէջ փճացնելու գլխաւոր միջոցներէն մէկը եղած է որչափ հնար է ընդարձակ սահմաններով հող կորզել

Հայոցմէ, եւ անիրաւարար զանոնք մահմետականներուն փոխանցել:» Այս իրողութիւնը հաստատելու համար Տեղեկագրին յառաջ բերած օրինակներուն մէկ մասը ներկայացուցինք մեր ընթերցողներուն: Պատրիարքարանը երբեք անհոգ չէ՝ երեցած հայ ժողովրդին փճացմանը ձգտող այս քաղաքականութեանը առջեւ: Ներսէս Պատրիարք 1876 օգոստոս 24ին Դրան թաղարիւր մը գրելով անգամ մը եւս կը բողոքէ հողային հարստահարութեանց դէմ, և դարմանը խորհիլ կ'առաջարկէ: Ահաւասիկ այդ բարբիտը:

«Հայ ազգին մեծագոյն մասը որ օսմանեան կառավարութեան հզօր հովանիին տակ կ'ապրի, Ասիական թիւրքիոյ մէջ կը բնակի, և այդ ժողովրդին մէկ ստուարութիւ մասը բացարձակապէս երկրագործութեամբ կը պարապի: Սակայն հաստատուած է որ կարգ մը Գիւրտ պէյեր եւ իսլամ աղաներ կարող եղած են զբաւել մեր երկրագործ ժողովուրդներուն մշակած եւ արգասաւորած արտերը եւ զանոնք իրենց օձագլուխները ընել:»

Ահա այսպէս մեր ժողովուրդը իր ամէնէն նուիրական իրաւունքներէն կը զրկեն այս օտարամուտները որոնք գեղացիին հետ կը բաժնեն, եւ կը յափշտակեն՝ շատ անգամ բռնութեամբ, այնքան աշխատանքի վտիտ արդիւնքը, արդիւնք որ հազիւ թէ կը բաւէ անոր ընտանիքին էն հարկաւոր պէտքերուն: Երկրագործը չկարենալով բաւականութիւն տալ այս չափազանց պահանջումներուն, կ'ենթարկուի ամէն տեսակ հարստահարութեանց, եւ կը հասնի այնպիսի անտանելի չքաւոր վիճակի մը որ ա՛լ անկարող կ'ըլլայ հոգալ իր պէտքերը եւ վճարել տուրքերը: Ուստի եւ գեղացին կը պարտաւորուի թողուլ իր ընտանիքը եւ արտը, ու գաղթել Պոլիս կամ այլուր: Հետեանք այն կ'ըլլայ որ անհուն եւ արգասաւէտ հողեր կը մնան անմշակ, ի վնաս պետական գանձուն, ու բազմութիւ ընտանիքներ՝ զրկուելով իրենց նեցուկներէն, կը մատնուին յուսահատական թշուառութեան:»

Թաղարիւրն մէջ Պատրիարքը երկարօրէն կը խօսի հայ երկրագործ ժողովրդին կացութեանը վրայ, կը պարզէ Գիւրտ պէյերու և իսլամ աղաներու բռնապետութիւնը, որ թաւազիւտարին հաստատութեամբը տկարացած կը կարծուէր, բայց ընդհակառակը աւելի ևս սաստկացած է: Կացութիւնը դարձանելու համար իբր միակ միջոց, Ներսէս պատրիարք Դրան կ'առաջարկէ նահանգները խառն ժողովի մը առաջուր: Այդ մարմինը իրաց վիճակը տեղին վրայ քննելով դարձանները կառավարութեան կ'առաջարկէ և հարկ եղած տնօրինութիւնները գործադրուելով հիմնապէս կը բարեփոխուի Հայոց կացութիւնը:

Կառավարութիւնը այս առաջարկին մերժողական պատասխան կուտայ: Կը յայտարարէ թէ՛ Պատրիարքարանը անօրոշ կերպով գանգատներ կը յայտնէ միայն, առանց ճշգրտելու տեղուանքը և անձերը. հետեւաբար որոշ տեղեկութիւններ և իրողութիւններ ստանալ հարկա-

որ կը համարի որպէս զի իր գոյութիւններու վրայ հիմնուելով (քննութիւն կատարել տայ, եւ յանցաւորները պատժէ:

Այս հրամանին վրայ պատրիարքարանը վը փութայ ընդհանուր ցուցակագրութիւն մը պատրաստել այն հողերուն զոր Գիւրտ պէյերը և ուրիշները յափշտակած են: Նոր-կեանքի շատ մը սիւնակները պիտի գրաւէ այդ ցուցագրութիւնը: Վանէն մինչև Տրապիզոն, Քղիէն մինչև Կեսարիա, ամէն ուրեք իսլամը յափշտակած է հայուն հողը: Իւրաքանչիւր նահանգի, գաւառի, գեղի անունները, զբոհուած Հայոց անունները, յափշտակիչներու անունները մէկիկ մէկիկ նշանակուած են: Ու այս ցուցակագրութիւնը միայն բաւական է ցոյց տալու թէ Պատրիարքարանը շատ խնամքով և կանոնապահութեամբ հսկած է Հայաստանի վրայ: Եւ ամէն անոնք որ Պոլսոյ այդ կեդրոնը արհամարհած են, սխալներու մեծագոյնը գործած են: Եւ այդ կեդրոնին քաղաքական մեծ նշանակութիւնը ըմբռնելով է որ միշտ ջանացեր ենք ու կը ջանանք զայն կարող ու ապահով ձեռքերու մէջ տեսնել:

Պատրիարքարանին այս գանգատներուն վրայ Դուռը Յանձնաժողով մը կը կողմուի քննելու համար Հայոց հողային խնդիրը: Այդ մարմինը իր աշխատութիւնները աւարտելով տեղեկագիրը սատրազմին կը ներկայացնէ, եւ ինքն ալ նիստերը կը գաղթեցնէ: Յետո՛յ, — Յետո՛յ, ոչինչ մինչև 1876 Կ. Պոլսոյ դեսպանական խորհուրդը, ոչինչ՝ մինչև Պերլինի վեհաժողովը, ոչինչ՝ մինչև հիմակ:

* * *

Հարստահարութեանց այս երկրորդ Տեղեկագիրը առանց զգացնելու շատ ճշգրիտ գաղափար մը կուտայ Հայաստանի նկատմամբ թիւրք կառավարութեան նենգաւոր քաղաքականութեան վրայ: Հայը չքացնելու համար ո՛չ Հին Թիւրք կայ, ո՛չ Նոր Թիւրք, ո՛չ Երիտասարդ Թիւրք ո՛չ Ծեր Թիւրք, այլ՝ Թիւրք միայն: Տարիները իրարմէ թուանշաններով միայն կը զանազանուին. 1895ի քաղաքականութիւնը շարունակութիւնն է եւ կատարելագործութիւնը 1875ի հայաջինջ քաղաքականութեան: Եւ հիւսէյինի խնդիրը ամբողջ ամփոփում մըն է Դրան հակահայ նենգամիտ քաղաքականութեան: Ահա այդ ուշագրաւ պատմութիւնը իր զլխաւոր գծերուն մէջ:

Եւ հիւսէյինի խնդրին շուրջը եզական զուգահիւ պութեամբ մը իրարու ետեւէ շարուած կը տեսնենք հինգ սատրազմներու անուններ, որոնք Թիւրքիոյ ներքին և արտաքին քաղաքականութեան ամէն խնդիրներուն մէջ իրարմէ շատ տարբեր ուղղութեանց հետեւելով հանդերձ, իրարու լոնկեալն համաձայն են հակահայկական քաղաքականութեան մէջ: Այդ սատրազմներն են՝ Ալի փաշա, Մահմուտ Նէտիմ փաշա, Միտհատ փաշա, Մէհմեթ

Ռուշտի փաշա, Հիւսէին Ալի փաշա :

Նախ յիշեցնենք թէ Միտհատ փաշային սատրազամ ըլլալէն առաջ, Թիւրքիոյ զբիտոնեաները ենթարկուած էին ուղղակի Արտաքին գործերու պաշտօնատան իրաւասութեան : Պատրիարքարանները իրենց բոլոր քաղաքները կը զրկէին խարիճիլէն : իրենց յարաբերութիւնները Արտաքին նախարարութեան հետ էին : Քրիստոնեաները կը նկատուէին կերպով մը Եւրոպայի Պետութեանց հսկողութեան ներքեւ : Միտհատ փաշա Եւրոպայի թիւրքերուն պետը, ուզեց այս առանձնաշընորհուածը ջնջել, ինչպէս կը հետամտէր զբիտոնէից ուրիշ բոլոր առանձնաշնորհուածներուն ջնջմանը : Ուստի և Պատրիարքարաններուն կարևորութիւնը տկարացնելու համար գանձեց ենթակից Դատական եւ կրօնական գործերու նախարարին իրաւասութեանը, նկատել տալով գանձեց իբր պարզ կրօնական հասարակութիւններ, առանց ո՛ր և է քաղաքական նշանակութեան : Այդ թուականէն սկսեալ հետզհետէ աւելի կնճռատեցան Պատրիարքարաններու եւ Դրան յարաբերութիւնները : Արտաքին գործերու նախարարները քիչ շատ աչքի առջեւ կ'ունենային զետպանատունները, եւ Պատրիարքարաններու հետ բաւական ակնածանքով կը վարուէին, զիւսնազիտական ձեւակերպութիւնները յարգելով : Իսկ գատական նախարարները, քաղաքական նրբութեանց անտեղեակ, ամէն խնդիր իսլամական գենին ըմբռնութիւնովը սկսան քննել, օրէ օր Պատրիարքարանները և Ատլիէն իրարմէ կը հեռանային, մինչեւ որ, գոնէ մեր Պատրիարքարանը, բացարձակօրէն ընդդիմադրու հանդիսացաւ :

Երբ մեր յարաբերութիւնները խարիճիլէին հետ էին, ընդհանրապէս նախարարները քաղաքավարի կ'երևէին եւ արտաքին ձեւերու յարգող : Կոշտ ու կոպիտ նախարարները հազուապէս բացառութիւն կը կազմէին, և ասոնց մէջ տխուր յիշատակ մը թողած է Եգիպտացի խալիվ Եւրիֆ փաշան, որ Հայոց շատ հակառակ էր, պիտաւորապէս Եգիպտոսի մէջ հայ փաշաներու հետ ունեցած զրտութիւններուն պատճառաւ : Պոլիս խուլ թշնամութիւն կար Եւրիֆ և Աթրահամ փաշաներու միջև. ու Հայը տապալեց Եգիպտացին :

Այս Եւրիֆ փաշան էր որ նախատական վարժունք ունեցաւ Պատրիարքարանին հետ Էրզնկեանի եւ Քղիի շրջականերու հարստահարութեանց խնդրին պատճառաւ : Խրիմեան Պատրիարք Ծահ Հիւսէյինի խնդրին առթիւ իր զրած թաքրիրներուն կծու պատասխան մը առաւ : Եւրիֆ փաշա կը յայտարարէր թէ Պատրիարքարանին գանձատները անհիմն էին, եւ անոնց ծագումը կը վերագրէր երկու եկեղեցականի՝ Մելքիսեղէկ եւ Եփրեմի, զրդուաներուն : Արտաքին գործոց նախարարը կը պարսաւէր Պատրիարքարանը որ քանի մը անհանդարտ մարդերու գործիք եղած էր : Պատրիարքը անմիջապէս կը բողոքէ

սատրազամին որուն կը զրկէ նաև պատճէնը խալիվ Եւրիֆ փաշայէն ստացած քեզքեքէին : Ու կը յայտարարէ թէ « Արտաքին գործերու նախարարը իրեն զրկած ծանուցազրին մէջ գործածած է անանկ լեզու մը որ նախընթաց չունի, եւ վերաւորիչ է Հայ Ազգին Պատրիարքարանին արժանապատուութեանը : » Եւ այս առթիւ Պատրիարքը վերստին կը կրկնէ Էրզնկեանի եւ Քղիի շրջականերու հայ ժողովրդին գանձատները Քիւրտ պէյերու եւ անոնց արքանեակներուն դէմ. գանձատներ որոնք բազմաթիւ տարիներէ ի վեր կը լսուին եւ կը մնան անդարձան : Իրաւ է որ Դուռը որոշումներ տուած եւ հրամաններ զրկած է բայց նահանգային իշխանութիւնը չէ ուզած գործադրել կեզգոնէն ստացած հրամանները : Պատրիարքարանը ուրեմ այս հրամաններուն գործադրութիւնը կը պահանջէ :

Այս թաքրիրն ալ առանց պատասխանի կը մնայ :

Հիմակ համառօտեցնք Ծահ Հիւսէյինի պատմութիւնը, Պատրիարքարանի թաքրիրներէն :

Ծահ Հիւսէյին Էրզնկեան գաւառակին Գուզուլճանի գայմագամն էր : Իր հայրը Ծահ Հիւսէյին օղլու Ալի պէյ, Տէրսիմի մէջ շատ ազդեցիկ ըլլալով բազմաթիւ զծուարութիւններ յարուցած էր տեղական իշխանութեան առջեւ, ուստի եւ ձերբակալուելով վիտին աքսորուած էր : Իր որդին Գուզուլճանի գայմագամութեան կը կոչուի, եւ հետեկելով հօրը օրինակին, ու քրդական աւանգութեանց, կը հարստահարէ հայ ժողովուրդը : Հայերը կը զիմեն Պատրիարքարան, որմէ գանձատագրեր կը գրուին Դուռը : Խնդիրը կը ներկայացուի Պետական խորհրդին, որ Ծահ Հիւսէյինին Գուզուլճանէն հեռացումը կը վճռէ : Եւ սատրազամ համբաւուոր Ալի փաշան հետեւալ եպարզօսական հրամանագիրը կը զրկէ Էրզրումի կուսակալութեան, որուն ներքեւ է Գուզուլճան : Այդ պաշտօնագիրը իր կարևորութեանը պատճառաւ ամբողջապէս կը ներկայացնենք : Ահաւասիկ .

« Հայոց Պատրիարքարանը տեղեկագիր մը ներկայացուց այն քրդական շարագործութեանց մասին, սրնոց կը զոհուին Քղիի և Էրզնկեանի Հայերը : Պետական խորհրդին որոշմանը համաձայն Չեր Վսեմութեան կը զրկեմ այդ տեղեկագիրը եւ շարագործութեան վերաբերեալ թաքրիրները, և այս գործին վրայ կը հրաւիրեմ ձեր ուշադրութիւնը :

Այս թուրքերուն ընթերցումէն Չեր Վսեմութիւնը պիտի տեղեկանայ թէ կիւլլապ օղլու Ազիզ՝ որ իր հայրը, մայրը, կիներ սպաննած է. եւ՝ Ծահ—Հիւսէյին օղլու—Հիւսէյին պէյ, իր եղբայրները ի պրահիմ պէյ եւ թիմուր պէյ, ինչպէս նաև քանի մը ուրիշ անձեր սպաննութիւններ կ'ընեն, ընտանիքներու պատիւը կս բռնաբարեն, արտերը կ'այրեն ու յափշտակութիւններ կ'ընեն : Այս մը տընջեանական հարստահարութիւնները կառավարութեան

հաւատարիմ հպատակներուն ապահովութիւնը եւ հանգրտութիւնը վրդոված ըլլալով, խնդրուած է որ այս չարագործներէն մէկ քանին Պոլիս դրկուին, որպէս զի դատուին, եւ ուրիշներ ալ այսօրուրնէ իսկ հեռացուին այդ կողմերէն:

«Որովհետեւ կառավարութեան էն նուիրական պարտքն է միշտ իր պաշտպանութեանը ներքեւ ասնել ժողովրդին կեանքը, պատիւը եւ ստացուածքը, եւ միանգամայն անհրաժեշտ է նաև ձերիսին նման կարեոր նահանգի մը մէջ կառավարութեան զանազան կարգի հպատակներուն միջև միութեան եւ համաձայնութեան կապեր հաստատելու աշխատիլ, ուստի կը ցաւինք. Հայոց Պատրիարքարանէն անդադար անկարգութեանց եւ անկանոնութեանց մասին զանգատներ լսելուս: Մեզի կը տեղեկացնեն անուղղելի Շահ Հիւսէյին պէյին հարստահարութիւնները եւ բռնաբարութիւնները. աւելորդ է ձեզի բացատրել թէ կառավարութեան վրայ ինչ ազդեցութիւն կ'ընէ այդ մարդուն իբր քայմաքամ Գուզուլման պահուիլը, որմէ կը քաջալերուի իր հարստահարութիւնները շարունակելու: Թէեւ անյարմար է նախ քան իրողութիւններու քննութիւնը ընդունիլ թէ այս առթիւ բոլոր պատմուածները կէտ առ կէտ ճիշտ եղած ըլլան, սակայն ոչ նուազ անվիճելի է թէ այդ քան զանգատներ եւ բողոքարկութիւնները չեն կրնար անհիմն ըլլալ: Միանգամայն յայտնի է թէ մեր օգոստափառ վեհապետին արդարասէր ոգին չկրնար ընդունիլ որ ի վնաս իր հաւատարիմ հպատակներու ամենաչնչին հարստահարութիւն մը գործուի: Ուստի վստահօրէն կը սպասենք որ Ձեր վսեմութիւնը յանցաւորներուն դէմ փութով պիտի գործադրէ սլատական օրէնքներուն տրամադրութիւնները, երբ այս մասին բացուած քննութիւնը օրինապէս վերջանայ:

«Գալով այդ տրամադրութեանց գործադրութեան, յայտնի է որ վերև յիշատակած անձերս Գիւրտ ցեղապետներ ու միւսոյն ատեն պէյեր ըլլալով, խեղճ ժողովուրդը պիտի չհամարձակի դատարանի առջեւ քաշել այս վերջիններս եւ անոնց կուսակիցները, որոնք շատ զօրաւոր եւ շատ ազդեցիկ են: Հետեւաբար ստիպողական հարկ մըն է որ յիշեալ Հիւսէյին պէյը Գուզուլմանի գայմագամութեան պաշտօնէն հանուի եւ տեղը պարկեշտ եւ արժանաւոր մէկը յաջորդէ. միանգամայն հարկ է որ յիշեալ Պէյերը եւ անոնց կուսակիցները առժամաբար ձերբակալման վիճակի մէջ դրուին, մինչեւ որ անոնց անմեղութիւնը կամ մեղապարտութիւնը ճանչցուի, եւ այսպէս ժողովուրդը հրապարակաւ հրաւիրուի եւ կարող ըլլայ կատարեալ ապահովութեամբ ուղղակի դատարաններուն ներկայանալ, իր զանգատները պարզել, եւ իր բողոքները լսեցնել: Ապա, ձեզի կը յանձնարարենք զանգատները իրենց բոլոր մանրամասնութեանցը մէջ քննել եւ երկու կողմը դատել հարկ եղած արթուն մտքով: Եթէ անհատական ամբաստանութիւններ չէք գտներ ինչ ինչ

չարագործութեանց համար, թող տեղական իշխանութիւնը իր վրայ առնէ այս տեսակ գործերու մասին որոշում մը տալ, եւ արդիւնքը հաղորդէ նահանգին կեդրոնական դատարանին, որպէս զի այս վերջինս ալ խընդրին վրայ անգամ եւ վճիռ տայ: Հաճեցէք յետոյ ձեր տեղեկագիրը որքան կարելի է շուտով ինձի հաղորդել, որպէս զի օրինական ձեւակերպութիւնները կատարուին: Մէկ խօսքով, կորովի եւ արդարադատ միջոցներ ձեռք առէք որպէս ի ապագային այլ եւս խնդրի առարկայ չըլլան ժողովրդներուն հանդարտութիւնը եւ կատարեալ ապահովութիւնը, եւ տեղի շտրուի նմանօրինակ գանգատներու:

ՍՆՆԻ

Նեենգամիտ դիւանագիտութեան գլուխ գործոց այս հրամանագրին մէջ է ամբողջ Ալի փաշան, այսինքն՝ Թիւրքիոյ այն քաղաքական դպրոցը որ արտաքուստ քաղաքակրթութեան սկզբունքները դաւանելով ներքուստ միշտ կը մնայ Տաճիկը: Չենք տարակուսիր թէ սուլթան Համիտի յաջորդող վարչութիւնը պիտի հետևի Ալի փաշայի քաղաքականութեան, որ է՝ քրիստոնեաները ոչնչացրնել փրկելով արտաքին ձեւերը:

Մինչ այս մինչ այն Ալի փաշա կը մեռնի եւ անոր կը յաջորդէ Մահմուտ Նէտիմ փաշա հին Թիւրքը: Ասիկա ալ իր առջին կունենայ Գուզուլմանի խնդիրը, զի Շահ Հիւսէյին կը շարունակէ պաշտօնավարել իբր քայմաքամ: Նոր Սատրապ մը քննութիւն եւ դատաստան կը յանձնարարէ: Ամիսները դարձեալ կ'անցնին, եւ ահա Շահ Հիւսէյինի դէմ եպարգոսական երրորդ հրամանագիր մըն ալ կը դրանք Միտհատ փաշայի ստորագրութեամբ:

Հիմակ Էրզրումի կուսակալը այլ եւս ակներև կերպով Շահ Հիւսէյինի կողմը կը բռնէ, Համբաւաւոր հարստահարչին դէմ հայերը չեն միայն որ կը բողոքեն այլ եւ իսլամներն ալ, որոնք ներկայացուցիչ ունին Քարա Հիւսէյին օղու Մէհմետ եւ կիւճէնքի Մէհմետ ազաները: Վալին այս իսլամներուն բողոքարկութիւնները անձնական հակառակութեան կը վերագրէ, եւ Շահ Հիւսէյինի այդ հակառակորդները երկրէն աքսորելու առաջարկը կը ներկայացնէ: Հողային խնդիրներուն մէջ ալ իրաւունքը Շահ Հիւսէյինի կողմը կը գտնէ, ընդդէմ Հայոց:

Էրզրումէն եկած պաշտօնական թուղթերը կը դրկուին Գատական նախարարութեան որ տեղեկագիր մը պատրաստելով կը ներկայացնէ Դրան, որուն մէջ կը հաւատաւոր թէ յիշեալ Հիւսէյին պէյը իր ունեցած ազդեցութիւնը շարաշար գործածելով կառավարութեան առջև շատ դժուարութիւններ յարուցած է: Միտհատ փաշա ինքն ալ կը յիշեցնէ Էրզրումի կուսակալին թէ «Շահ Հիւսէյինը՝ որդի վիտիս աքսորուած Շահ Հիւսէյին Օղու Ալի պէյին, ատենէ մը ի վեր հռչակաւոր եղած է իր հօրը հեռքերուն վրայէն ընթանալով, եւ ամէն տեսակ հարստահարութիւններով ժողովուրդը կեղեքելով: Ասկէ զատ դժուարութիւն

ներ կը յարուցանէ այդ կողմերը քաղաքային եւ գաւառական վարչութիւն մը հաստատուելուն գէժ: Հայոց Պատրիարքն ալ անդադար կը զանգատի իրաց այս վիճակին գէժ, ու նաև բազմաթիւ անձեր ինծի կ'ապահովեն որ եթէ այս բռնութիւնները տակաւին շարունակեն, այդ կողմերը Քրիստոնեաները պիտի պարտաւորուին թուղու իրենց երկիրը եւ գաղթել:

Միտհատ փաշա կը յիշեցնէ որ հակառակ կառավարական հրամաններուն յիշեալ Պէյը չէ ներկայացած դատարանի, իր հակառակորդներուն հետ գէժ առ գէժ գալու համար: Ու վերջապէս կը պատուիրէ Հիւսէյինը Գուզուլճանէն հեռացնել եւ ուրիշ տեղի մը քայմաքամ նշանակել, ա'լ երկիրը չվերագոնալու պայմանաւ մինչև որ կառավարութիւնը այդ պէյին արարքներուն վրայ որոշ դադափար մը կազմէ:

Ամիսները նորէն կը սահին, նորէն սատրազամը կը փոխուի, Մէհմէտ Բուշտի փաշա կը յաջորդէ Միտհատի, ու ան ալ Շահ Հիւսէյինը միշտ Գուզուլճանի քայմաքամ կը գտնէ: Ահա եպարզոսական չորրորդ հրամանագիր մը ևս կը ղրկուի Էրզրում: Նոր Սատրազամը կտրուկ լեզու մը կը գործածէ. կը պահանջէ որ Դատական գործերու պաշտօնատան որոշումը յարգուի «մանաւանդ որ յիշեալ պէյը իր բռնութեանց եւ հարստահարութեանց գործերը բազմապատկեցուցած է: Մուհաբէթմաթին որոշմանը վերայ, անգամ մը ևս ձեզի կը յանձնարարենք, կը գրէ սատրազամը, անմիջապէս գործադրել յիշեալ հրամանը և արդիւնքը մեզի հետագրել:»

Չենք կրնար գիտնալ թէ ինչ հեռագրած է, բայց կը տեսնենք թէ Բիշտի փաշային յաջորդած է Հիւսէյին Ալիի փաշա, որ էն զօրաւոր սատրազամներէն մէկը եղաւ, իր վրայ ունենայով եպարզոսութեան պաշտօնին հետ նաև սպարապետութիւնը: Սերասկէր ու սատրազամ էր միանգամայն, ինչ որ ահեղ դիրք մը կուտար իրեն: Հիւսէյին Ալիի փաշա եւս կը զբաղի Շահ Հիւսէյինի խնդրով, եւ Էրզրումի կուսակալին կը հրամայէ անոր պաշտօնանկութիւնը, հետևեալ յանձնարարութեամբ. «Յատուկ Յանձնաժողովը պատշաճ գտնեց որ այդ պէյը պաշտօնանկ ըլլայ, Նահանգին կեդրոնը ղրկուի գատուելու համար, եւ իր տեղը ղրուի պարկեշտ ճանչցուած մարդ մը, երբ նահանգին մէջ կը գտնուի: Հակառակ պարագային հաճեցէք ինծի իսացնել որպէս զի Պոլսէն մէկը ղրկուի:» Ինչ վարչական բարքեր. սատրազամ մը որ կը վարանի հատալ թէ մեծ նահանգի մը մէջ որպիսին է Էրզրումը, կարելի ըլլայ գտնել պարկեշտ իսլամ մը, քանի մը գեղ կառավարելու ընդունակ, այդ սատրազամը իր այս վարանումովը գատապարտած չէ՞ ամբողջ թրքական վարչութիւնը:

Հինգերորդ հրամանագրին արդիւնքը Ինչ կ'ըլլայ: Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովը տխրութեամբ այս հարցումին կը պատասխանէ թէ «Մեծ եպարզոսա-

կան հինգ հրամանագրերուն հակառակ, Հիւսէյին պէյ տակաւին կը շարունակէ Գուզուլճանի քայմաքամութեան պաշտօնը:»

Հայ ընթերցողը որ թիւրքիոյ վարչական բարքերը գիտէ, դիւրաւ կ'ըմբռնէ որ քառորդ դար մը առաջ կուտակալ մը կարող չլը անսաստել սատրազամին հրամաններուն: Ան ատեն Երլարդ չի կար, եւ թիւրքիոյ ամբողջ իշխանութիւնը կեդրոնացած էր Պապը-Ալին որուն բացարձակ տէրը սատրազամն էր: Տարակոյս չի կայ որ կ'ամեպարզոսները ձեռքի տակէ գաղտնի հրահանգներ կը ղրկէին, կամ վալի ու Սատրազամ իրարու լեզուէ կը հասկնային: Առանց այս պայմաններուն կարելի չէ որ վալի մը համարձակէր հինգ սատրազամի հրամաններուն անսաստել, որքան ալ որ այդ հրամանները երկրի մի եղած ըլլային:

* * *

Հարստահարութեանց քննիչ երկրորդ Յանձնաժողովին տեղեկագիրը ամբողջապէս կը դառնայ աւարտութեանց, յափշտակութեանց, սպաննութեանց շուրջը, որոշ ու ճշգրիտ տեղեկութիւններով: Տեղեկագրին ամէն մէկ տողը ամբաստանութիւն է ուղղակի թիւրքիոյ կեդրոնական կառավարութեան եւ անոր նշանակած պաշտօնեաներուն գէժ: Ակնհերե կը տեսնուի թէ երկրին իշխանութիւնն է որ քիւրտերը, իսլամները կը զրգոէ, կը քաշալերէ ընդդէմ Հայոց:

Տեղեկագիրը կը վերջանայ բարեկարգութեանց ծրարագրի մը առաջարկով: Այդ ծրագիրը նոյնն է ինչ որ նախորդ Յանձնաժողովը առաջարկած էր: Բնական էր որ այդ առաջարկն ալ անգործադրելի մնար, քանի որ կառավարութիւնը ինքն է որ Հայոց տկարացումը և փճացումը առաջադրած է:

Հարստահարութեանց քննիչ երկու Յանձնաժողովներուն Տեղեկագիրները ուշադիր ուսումնասիրողը կ'ըզնայ ըմբռնել թէ քառորդ դար մը առաջ որպիսի հոգեկան զրգոնալ վիճակի հասած էր Հայաստան: Պերլինի ՅԱՐԳ յօդուածը ո'ր և է շօշափելի օգուտ մը չընծայելով մեզի, նախկին կացութիւննիս ոչ միայն շարունակուած էր այլ և աւելի վատթարացած:

Պերլինի վեհաժողովէն յետոյ հայ ազգը հոգեկան տաքնապի մատնուած էր, տաքնապ մը որ միանալով ուրիշ պայմաններու պատրաստեց յեղափոխութեան գաղափարին համար նպաստաւոր կողանք: Երբ ժողովը սկսաւ օգտակար եղաւ թէ մնասակար: Վճիռը ապագան պիտի տայ, վասն զի ազգին յեղափոխական կեանքը կը շարունակուի: Երբ պատերազմ մը կը սկսի, վաստկուած կամ կորսուած ճակատամարտները չեն կրնար վճռել թէ վերջնական յաղթանակը ո՞ր կողմ պիտի մնայ: Թրանսվալի պատերազմը դեռ աչքերնուս առջեւ է: Ո՛չ Պօլսնեբու

առաջին յաջողութիւնները ապագային երաշխաւորութիւնը եղան, ո՛չ ալ Անգլիացիներուն պարտութիւնները լքումի եւ յուսահատութեան դատապարտեցին զիրենք:

Ինչ որ կը մնայ մեզի ընել, եւ զոր ընելու վրայ ենք, Անգլիացիներուն օրինակին հետևողութիւնն է, թէև տարբեր ուղղութեամբ եւ տարբեր միջոցներով. յարատեւել կողին մէջ, ճանչնալով սակայն գործուած սխալները եւ միշտ զանոնք ուղղելով:

Ապագան յարատեւութեան մէջ է:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

ԶԱՆՇԵԱՆՑ

Ռուսիայէն խորին ցաւով կ'իմանանք Գրիգոր Զանչեանցի մահուան լուրը: Հանգուցեալը Հայաստանի վերջին աղէտներէն յետոյ Հայ ազգին ծանօթացաւ Հայ որբերը խնամելու նպատակաւ իր կատարած աշխատութիւններովը, որոնց մէջ առաջին տեղը կը բռնէ Եւբայրական Օգնութիւն» հրատարակութիւնը: Զանչեանց կրցաւ 7,000 ոսկիի չափ զուժար մը յատկացնել մեր որբերուն. Կ. Պոլսոյ Պատրիարքարանը «որբերու խնամակալ» տիտղոսով պատուեց զինքը:

Բայց Զանչեանց այդ թուականէն շատ առաջ ալ Հայկական դատին աշխատող մը եղած էր: Տասը տարի առաջ Պոլիս գնաց, 1890 սեպտեմբերի մէջ, Հայկական խնդրին պայթման միջոցին, ուսումնասիրեց կացութիւնը, եւ ուսերէն լեզուով բազմաթիւ հրատարակութիւններ ըրաւ Հայկական հարցին շուրջը:

Տաղանդաւոր օրէնսգէտ, Զանչեանց իր մասնագիտութեանը պատկանող հրատարակութիւններովը եւս ուսուցողութիւն մէջ մեծ հաճաւ կը վայելէր:

Գրիգոր Արծրունիի մահէն յետոյ Զանչեանցը, որ Ռուսքի վիճակագրիին աշխատակցութեամբը հանրաժանօթ էր իբր հրապարակագիր, Մշակի խմբագրութեան կոչելու խորհուրդը յաջողեցաւ. բայց երկու կողմէն ալ զանազան նկատումներով այս գաղտփարին իրականացումը յարմար չդատուեցաւ:

Տաղանդաւոր, գործնականապէս ազգասէր այս նշանաւոր հայուն մահը վշտահար կը թողու ամէնուս սիրտը:

ՆՈՐ ԿՈՏՈՐԱԾԸ

Սասունէն սարսափելի նոր կոտորածի մը գուժը կը հասնի: Սուլթան Համիտի զօրքը Ալի փաշայի առաջնորդութեամբ Հիմնայտակ քանդեր են Սպաղանք գեղը, թրէ անցընելով բոլոր Հայ բնակիչները առանց խաւարութեան: Էրիկ մարդ թէ կնիկ մարդ, ծեր թէ երիտասարդ, աղջիկ թէ մանչ, տղայ թէ երախայ ամէնքն ալ վայրագաբար անխնայ կոտորուեր են:

Բիւթէրի գործակալութիւնը Կ. Պոլսէն օգոստոս 15 թուականով հետեւեալ մանրամասնութիւնները կը հաղորդէ այդ ահեղ ոճրագործութեան մասին:

«Սպաղանք հայկական պատիկ գեղ մըն է գրեթէ 150 բնակիչով, եւ կը գտնուի Սասունի լեռնային գաւառակին մէջ, Տալփորիկէն ոչ շատ հեռու: Իր գեղացիները քաջարի լեռնականներ են որոնք աւազակ ֆիւրտուրու հետ իրենց ընդհարումներուն մէջ շատ լաւ գաղափար մը տուած են իրենց մասին: Անցած տարի Խոյնայի եւ Պէկրանի ցեղերուն պատկանող խումբ մը ֆիւրտուր Սպաղանքի վրայ յարձակեցան, աւարառութեան համար, բայց յաղթուելով փախան, չորս հոգի իրենցմէ ըսպաննուած թողլով. ու հայերը կրցին նորէն ետ առնել իրենցմէ գողցուած ոչխարներուն մեծ մասը: Այս դէպքին վրայ գեղին երկու քահանաները եւ էն ազգեցիկ բնակիչներէն եօթ հոգի ձերբակալուելով բանտարկուեցան Կիւնճէ, սր տակաւին կը մնան մէկ քահանան եւ աշխարհականներէն ալ մէկը. միւսները քիչ առաջ արձակուեցան: Ֆիւրտուրը միտքերնին դրին իրենց պարտութեան վրէժը ամբողջապէս լուծել, ուստի գացին Տեղական իշխանութեանց ըսին թէ Հայ յեղափոխականներ Սպաղանքը իրենց կեղրոնավայր ըրած են:

«Յուլիս 16ին Պիթլիզի գինուորական հրամանատար Ալի փաշա, բազմաթիւ կանոնաւոր զօրքերու, եւ Պէկրանի եւ Խոյնայի ցեղերուն պատկանող ֆիւրտուրու զուլսը անցած պաշարեց Սպաղանքը: Հայերը ինքզինքնին պաշտպանելու թեթեւ փորձ մը ըրին, բայց իրենց վրայ բերուած մեծկակ, բազմաթիւ զօրութեան առջեւ անկարող կը մնային: Ոմանք փորձեցին փախչիլ բայց չյաջողեցան, վասն զի գեղը ամբողջապէս պարանի ներքեւ առնուած էր, եւ զուրս ելլելու հնարաւորութիւն չի կար: Ահեղ կոտորած մը տեղի կունենայ. բոլոր բնակիչները այր թէ կին, երիտասարդ թէ ծեր, ամէնքն ալ սրէ կ'անցուին: Գեղին քահանան, ութսուն տարուան ծերունի մը, իր ընտանիքին ու մէկ երկու բարեկամի հետ եկեղեցիէ ապաստանեցաւ, բայց եկեղեցին այրեցին ապաստանեալներովը մէկտեղ: Միւս բոլոր տուններն ալ կրակի տրուեցան, անոնց վրայ կազ լեցուցին որպէս զի շուտով այրին: Սպաղ-

անց ուստի ամբողջովին անհետացաւ: Կը կարծուի թէ բնակիչներէն հազիւ թէ տասը տասերկու հոգի դեռ կ'ապրին: Մերձակայ միւս գեղերն ալ՝ Եղկարտ, Իգորէր, Խիզան շատ մը տուններ աւարի տրուեցան, եւ հայեր սպաննուեցան:»

Կ. Պոլսէն կը գրեն մեզի.

Բաղէշի զինուորական հրամանատար Ալի փաշա Համիտիյէ և կանոնաւոր զինուորներէ բաղկացած գունդի մը զլուխ անցած կը հասնի Սասունի Սպաղանք գեղը եւ կը պաշարէ զայն:

Հրամանատար փաշան տասներու չափ զեղացիներ եւ տեղին ութսունամէկ տարեկան քահանան կը տանջէ եկեղեցիին մէջ եւ կը պահանջէ որ իրեն ցոյց տան զեղը գտնուող յեղափոխականները: Տանջուողները կը պատահանեն թէ իրենց յօտ յեղափոխականներ չի կան. այս պատասխանին վրայ փաշան կը հրամայէ զօրքերուն որ գարնեն: Եկեղեցին մոխիր կը դարձնեն հոն ապաստաններու հետ մէկտեղ: Գեղացիներէն ոմանք այն պահուն որ կը փախչէին, յարձակում կրելով քանի մը զինուոր կը սպաննեն:

Եկեղեցին բոցերու մէջ գտնուած ատենը, փաշային հրամանին համաձայն Սպաղան գեղն ալ չորս կողմէն կրակի կը տրուի:

Գեղապետին կիներ որ յղի էր, սոսկալի տանջանքներու տակ կը մեռնի հրեշտային բռնաբարութիւններ կրելէ ետքը:

Հիւպատոսներէն իրենց զեպանատունները հասած տեղեկութիւնները թէ և կըսեն թէ շարգուողներուն թիւը 200 է, բայց տարբեր աղբիւրներէ անուած տեղեկութիւնները 500-600ի կը բարձրացնեն զհերոս թիւը:

Համիտիյէները Սպաղանքէն ետքը կը յարձակին ուրիշ երեք հայ գեղերու վրայ ալ, զորոնք աւարի տալով բնակիչները մերկ ու նօթի վիճակի մէջ կը թողուն:

Սասունի ժողովրդին մէջ նոր շարգերու արհաւիրքը կը տիրէ ու թշուառութիւնը անսկարագրելի է:

Թաւանի Կ. Պոլսոյ թղթակիցն ալ գրեթէ միևնոյն տեղեկութիւնները կը հաղորդէ: Կ'ըսէ թէ անցեալ տարի Սպաղանքի զեղացիները իրենց զիւղապետին, Բէիւ Մակարի հրամանատարութեան ներքեւ քիւրտերուն ետեւն ինկան և անոնցմէ ետ առին այն ոչխարները զորոս այդ քիւրտերը յափշտակած էին Սպաղանքէն. Հիմակ Ալի փաշայի հետ եկող քիւրտերը Մակար Բէիւ կը փնտռէին, բայց զայն չգտնելով անոր յղի կիներ խղզեցին:

* * *

Իսկ թիւրքերէն բղխած պաշտօնական տեղեկութիւնները, զոր Լոնտոնի թերթերը եւս հրատարակեցին, հե-

տեւեալ կերպով կը պատմեն այդ ահեղ կոտորածը:

«Ալի փաշա կ'ըսէ թէ տեղեկութիւն ստացած ըլլալով որ հարիւրէն աւելի հայ աւազակ Սասուն գաւառակին մէջ պահուրտած էին, ինքը պարտաւորուեցաւ այդ գաւառակը պառլտի ելլել զինուորական զօրութեան զլուխ անցած: Տալլուրի հասաւ՝ ուր ամէն ինչ հանդարտ էր և կարգուկանոնի մէջ, եւ տեղեկացաւ որ մօտերը միայն քսաններեք աւազակ կը գտնուէին: Ուստի շարունակեց յառաջացումը եւ Աղոյի գտաւ դատարկ ախոռ մը որուն մէջ կը գտնուէին փայտէ վեց ննջելու պատգարակ: Գետինը հրացանի քանի մը փամփուշտներ ինկած էին, եւ պատերն ալ ծակծկուած էին: Ախոռը այրեցաւ, եւ յայտնուեցաւ թէ աւազակներու ապաստանարան մըն էր: Ալի փաշա ան ատեն յառաջացաւ դէպի Սիպկան, կամ Սպաղանք, որ բլուրին գագաթը տիրող դիրք մը ունի: Վեց տուն եւ ամրակառոյց եկեղեցի մը կը պարունակէ:

«Քանի մը աւազակներ որոնք այդ գեղը ապաստան փնտռած էին սկսան զօրքերուն վրայ կրակ ընել, երբ ասոնք մօտեցան: Ան ատեն որոշուեցաւ տեղին վրայ յարձակում ընել, եւ Հայերը անմիջապէս փախան. Ու կատաղիներէն երեքը եկեղեցին մտան, ուրկէ կրակ ըրին զօրքին վրայ: Եւ որովհետեւ անկարելի էր մուտքը խորտակել եւ ներս մտնել, զինուորները եկեղեցիին շուրջը փայտ ու խոտ դիզեցին, եւ ծուխին մէջ Հայերը հեղձած հեղան: Յետոյ տեսնուեցաւ որ նաև քահանայ մը, կին մը եւ տղայ մըն ալ եկեղեցին գտնուեր են եւ անոնք ալ հեղձածաւ հեղած են: Ալի փաշա կը ծանուցանէ թէ բոլոր սպաննուողները տասնըվեց հայ են միայն, մինչ զօրքերէն հինգ սպաննուած եւ քանի մըն ալ վիրաւորեալ կան, ասոնցմէ զատ ալ երկու Քիւրտ սպաննուեր են: Կը ցախ կնոջ եւ տղուն զիպուածական մահուանը վրայ: Կ'ըսէ թէ կրցածը բաժ է Քիւրտերը զսպելու համար և, թէ կարելի եղածին չափ քիչ քիւրտ առած է հետը: Ապա փայտ յեղափոխականներու ո՛ր եւ է շարժումին առջեւը տանելու համար Ալի փաշա որոշած է պահականոցներ հաստատել Կելէկիւզտն, Շէնեկ-Սէմալ, Կուրմաքի եւ Տալլուրիկ:»

Բնականաբար Պոլիս եւ Եւրոպա ո՛չ ոք հաւատք կը ընծայէ թիւրքիոյ պաշտօնական տեղեկութեանց, որոնց ստուծիւնը ակներև է նոյն իսկ այն հաւաստումէն թէ՛ Սպաղանք գեղը, ուր ամրակառոյց եկեղեցի մըն ալ կայ, վեց տուն միայն կը գտնուին:

Ջարդը ահեղ եղած է, եւ ուրիշ տեղեկութեանց նախելով, սպաննուած Հայոց թիւը 4-500ի կ'ելլէ: Հեռագիր մը կ'ըսէ թէ «այլեւս Սպաղանքի հետքը չէ մնացած, եւ ոչ իսկ յայտնի է թէ ուր գետեղուած էր:»

Կ. Պոլսոյ զեպանական շրջանակները նորէն քիչ մը տակնուվրայ եղած են, եւ բողոքներ զրկած են թիւրք պառավարութեան: Մինչեւ իսկ գերմանական զեպանատու-

նր գիտողութիւններ ներկայացուցած է Երլտըզին, եւ թելադրած է միջոցներ ձեռք առնել որպէս զի նմանօրինակ գէպքեր այլ ես չկրկնուին: Չմոռնանք սակայն որ Սասունի առաջին կոտորածէն ի վեր, ամէն անգամ երբ ջարդ մը տեղի կունենայ, միշտ կը լսուի միեւնոյն յանգերգը «Դրան թելադրութիւններ եղան որպէս զի նմանօրինակ գէպքեր չկրկնուելու համար միջոցներ ձեռք առնուին»: Այդ թելադրութեանց շոշափելի արդիւնքը այն եղած է որ «նմանօրինակ գէպքերը» միօրինակ յարատեւութեամբ պարբերաբար կը կրկնուին:

Այս անգամ յանձնաժողովի մը առաջուժը եւս առաջարկուեր է անգլիական զեսպանէն, բայց սուլթանը մերժողական պատասխան տուած է: Այս առթիւ Սրահն տարտի թղթակիցը կ'ըսէ.

«Հայոց կոտորածին քննութեանը համար Յանձնաժողովի մը առաջուժին թելադրութիւնը, որ անգլիական զեսպանատունէն ելած էր, ի սկզբան նպատաւորընդունելութիւն չգտաւ, եւ հիմակ ալ վերջնապէս մերժուեցաւ: Այս տեսակ գէպքերու առթիւ քննիչ յանձնաժողովին առաջուժը զիւանագէտներուն համար գործին մէջէն ելելու յարմար միջոց մը կը համարուի, թէև փորձառութիւնը ցոյց տուաւ Սասունի 1895ի կոտորածէն յետոյ թէ այսպիսի ծրագիրներու գործադրութիւնը շոշափելի ո՛ր է արդիւն չի տար:

«Կը զիտուի թէ քննիչ Յանձնաժողովներ զրկելու թելադրութիւնները, Դրան գիտողութիւններ ներկայացնելու դրութիւնը շատոնց պէտք էր վերջացած լինցած ըլլային, նկատուելով ո՛ր է օգտակար արդիւնք մը ձեռք բերելու իբր անօգուտ միջոցներ: Թրքական նաւահանգիստները մէկ կամ երկու մարտանաւի առաջուժը անտարակոյս աւելի օգտակար եւ արդիւնաւոր պիտի ըլլար քան թէ այդ պարզին բանակցութիւնները որոնք ոչ միայն միշտ առանց հետեանքի կը վերջանան, այլ եւ կը հաստատեն Եւրոպայի անգորութիւնը Թիւրքիոյ արիւնդուշտ զիւանագիտութեան հանդէպ:

Անգլիական մամուլը այս նոր կոտորածին առթիւ իր նախկին հայասեր ուղղութեանը սկսած է հետեիլ: Տէյլի Նիւզ, պարզապէս կը հեզնէ «մարդասէր» Ալի փաշայի տեղեկագրութիւնը որ Թիւրքիոյ աւանդական ստախօսութեան շարունակութիւնը կը համարի: Ազատական թերթը հաւատք կ'ընծայէ Բիւթերի տեղեկութեանց, եւ կը հեզնէ զեսպաններուն Դրան ըրած գիմումները որոնք միշտ բողոքով մը կը վերջանան: «Սակայն, կ'ըսէ Հայոց բարեկամ թերթը, Չինացի Քիւրտերուն զէմ քրիստոնէից պաշտպանութեանը համար զաշնակից պետութեանց յաջողութիւնը թերեւ թելադրէ թէ նմանօրինակ մէթօտները կրնան նմանապէս օգտակար ըլլալ աւելի մերձաւոր Արեւելի մէջ: Կ. Պոլիսը աւելի զիրաւատաչելի է քան թէ Բէքիւնը, եւ սուլթանը չունի անսահման տարածութեամբ հսոյ որ կարենայ անհրեւութանալ Չինաստանի կայսրուհին պէս:»

տանի կայսրուհին պէս:»

Տէյլի Քրօնիկը խմբագրական յօդուածներով կը պահանջէ որ Պետութեանց Չինաստանի համաձայնութիւնը գործադրուի եւ Հայաստան:

Անգլիոյ զաւառական թերթերն ալ կը ձայնակցին մայրաքաղաքի մամուլին. ու այս վերջին կոտորածը որ «լրումն եւ կատարումն» է, ամենամեծ ամօթը կը համարին Անգլիոյ համար:

Ֆրանսայի մամուլը եւս անտարբեր չի մնար. Մաքիե արձագանգ կուտայ Լոնտոնեան թերթերուն, եւ Թաւե ինչպէս ուրիշ օրագիրներ այս աղէտին վրայ մանրամասն տեսելութիւններ կը հաղորդեն:

Դրադրութիւն մըն է որ Եւրոպայի խորհրդարանները այս պահուստը զոցուած են, ապա թէ ոչ Անգլիոյ եւ Ֆրանսայի կառավարութիւնները բաւական ծանր վիճակի մէջ պիտի գտնուէին, վասն զի կարելի պիտի չըլլար զօգել երեսփոխանները:

Եւրոպայի մէջ այս իրարանցումը, զեսպաններուն բողոքարկութիւնները, եւ Չինաստանի մէջ Պետութեանց միաբանութիւնը եւ յաղթանակը՝ որ շարագուշակ է սուլթանին համար, կ'երևի թէ Երլտըզի վրայ շատ գէշ սուլթանութիւն ըրած են: Եւ ահա սուլթանը կը փութայ Բիւթերի գործակալութեան ձեռքով հետեւեալ հեռագիրը գարնել Եւրոպա:

«Սուլթանը իմանալով Սասուն պատահած ինչ ինչ գէպքերու մասին օտար մամուլին հրատարակած տեղեկութիւնները, իր բարձր ահաճութիւնը յայտնեց, եւ Պիթիսի զինուորական հրամանատար Ալի փաշային պաշտօնանկութիւնը հրամայեց, ինչպէս նաեւ ճշմարտութիւնը երեսան բերելու համար խիստ քննութիւն մը:

«Այս նպատակաւ մօտերս Յանձնաժողով մը Սասուն պիտի երթայ: Եթէ ծայրայեղութեանց տեղեկութիւնները հաստատուին, յանցաւորները ըստ օրինի պիտի պատժուին:

«Այս արագափոյթ տնօրինութիւնները ամենալաւ տրպաւորութիւն առաջ բերին, վասն զի ցոյց կուտան թէ սուլթանը կ'ուզէ որ իր բոլոր հպատակներուն միջև բարեկարգութիւն եւ հանդարտութիւն տիրէ:»

Այս հեռագիրը տարակոյս չունինք թէ Երլտըզի պաշտը իսկ խմբագրուած է: Գիտենք թէ այսպիսի ծանր պարագաներու մէջ ինչ կը պատահի: Բիւթերի գործակալութեան ներկայացուցիչը կը հրաւիրուի Երլտըզ, ուր ամենայն քաղաքավարութեամբ իրենց ցաւ կը յայտնուի անգլիական թերթերուն մէջ հրատարակուած «սուտ լուրերուն» համար: Բիւթերի ներկայացուցիչը ինքն ալ ցաւ կը յայտնէ որ այդ լուրերը Վիեննայի թղթակիցը հաղորդած է, բայց ինքը ինչ կրնայ ընել:—Յայտնի է թէ հակաթիւրք լուրերը Պոլսէն նամակով Ֆիլիպէ կը զբուկուին, եւ անկէ կը հեռագրուին Եւրոպա: Անախորժ տե-

դեկլորացիաները ընդհանրապէս Ռիւթերի Վիեննայի գործակալութեան վիզը կը փաթթեն, վասն զի թիւրքերուն ուժը մինչև աստրիական ժայռաբազաքը չհասնիր: Երբ էջ. Պոլսոյ ներկայացուցիչը ինքնարգարացման համար կը յայտարարէ թէ « իրաւ որ բան մը չիյտեմ, Վիեննայէն հաղորդած ըլլալու են այդ տեղեկութիւնները », ան ատեն այլ եւս իր բարեացակամութենէն կը խնդրուի հերքում տալ այդ « ստաբանութեանց »: Ու հերքումը կը խմբագրուի Երլտպը իսկ: Գործակալութիւնը սր այնքան բազմադիմի շահեր սնի թիւրքիոյ մէջ, բնականաբար կարող չէ մերժողական պատասխան մը առաջ քշել, ուստի կը պարտաւորուի իրմէն « խնդրուածը » կատարել, քաջ գիտնալով նաեւ որ թրքական ո՛ր եւ է հերքումը Երտպայի մէջ ծիծաղ կրնայ շարժել, ինչպէս կը տեսնուի ներկայ հերքումէն:

Եւ արդարեւ ո՞վ կրնայ մտաբերել թէ յուրիս ամուսնան մէջ Սասուն կատարուած ահռելի ջարդի մը լուրը սուլթանը օգոստոսի մէջ եւրոպական լրագիրներէն միայն կրնայ տեղեկացած ըլլալ: Ո՞վ կրնայ մտաբերել թէ առանց սուլթանին հրամանին ո՛ր եւ է պաշտօնեայ կրնայ այդպիսի ահեղ ոճրագործութեան մը յանդգնիլ:

Բայց այս յիմարական հերքումները իսկ կը մատնեն Երլտպը տիրող խուճապական տագնապը: Այն պահուն որ սուլթան Համիտի յորելեանը պիտի կատարուի Պոլիս, Սասունի նորագոյն աղէտը արիւնի տարիներու ուրուականը կը վերակենդանացնէ եւ ամօթի շտապով Երտպայի երեսը կը կարմրցնէ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

Նոր-Կեանքի նախորդ թուով հաղորդեցինք այն պաշտօնական տեղեկութիւնները որոնք կը նկարագրէին Տիարպէքիւրի 1893ի կացութիւնը, Էնիզ փաշայի կուսակալութեան օրով. հիմակ Տիարպէքիւրէն հասած տեղեկութիւնները կը նկարագրեն վիճակ մը որ շատ չտարբերի հինգ տարի առաջուան վիճակէն: « Ճշմարտութիւնը խոստովանած կ'ըլլանք, կը գրեն Տիարպէքիւրցիներ, եթէ մէկ խօսքով ըսենք թէ 1900 թուականը շարունակութիւնն է դեռ անիծեալ 1893ի, միայն թէ գոյները տարբեր են: Կառավարութիւնը հիմակ արիւնոտ կացիւնը եւ կրակոտ հրացանը Համիտիլէներուն ձեռքը տուած է, քրիստոնեաները սարսափահար պահելու համար. իսկ ինք, իշխանութիւնը, նոր նոր միջոցներով կը ճգնի չորացած ոսկորնուս մէջ մնացած պուտ մը արիւնը իսկ ծածելու, անկուշտ ալրուկի նման: » Մտնենք մանրամաս-

նութեանց մէջ:

Տեղական իշխանութիւնը յետեւալ բոլոր տուրքերը մէկ վճարումով գանձելու ձեռնարկեց այս տարուան ըսկիզբէն, անողորմ անլթութեամբ հաւաքումը կատարուեցաւ: Տիարպէքիւրի Հայերը չորս հինգ ամուսնան մէջ 2,000 ոսկի վճարեցին, իրենց բազմակարօտ ընտանիքին շուրսեկ օրապահիկէն կտրելով: Քրիստոնեայ միւս ժողովուրդներն ալ միենայն գժաղդութեան հանդիպեցան: Բայց ո՛ր էր թէ հարկահաւաքները գոհանային իրենց զանձամներովը. իբր անօթի գալլեր այդ եղեռնաւորները տունները ինկան, խանութները, գեղերը, և ամէն տեսակ տառապանքներով ժողովուրդին հոգին բերանը բերին:

Ու բաւական չէր այդ տուրքին հաւաքումը, Տէմուր-Եօլուի շինութեան տարապարհակ աշխատութիւնն ալ սաստկապէս կը ճնշէ ժողովուրդը: Ամէն առտու ոստիկաններ բիրը ձեռքերնին կը կանգնին բազմանցորդ շուկաներու եւ փողոցներու գլուխները, ու առջևին ելլող ամէն քրիստոնեայ, հաւերը բունը քշելու նման, հաւաքած կը տանին Մէրքէզը: Վայ անոր գլխուն որ յանդգնի բերան բանալ և ըսել թէ՛ « Ես վճարած եմ, ահա ստացադիրս: » Կամ թէ՛ « վրաս պատրաստ չունիմ, քիչ մը վերջը կը վճարեմ: » Կամ թէ՛ « համբերէ մէկէն փոխ առնեմ տամ:— Կը խնդրեմ վաղը թող մնայ: » Իսկոյն՝ « քիփելիէն շոռ քեաֆիլի » պողալով գտազանի աւողորմ հարուածները կը հասնին ըստ գիպաց: Այնպէս որ ոմանց գլուխը իսկ կը կոտրի, որո՞ն հոգ: Կա՛մ պէտք է անմիջապէս վճարէ եւ կամ պէտք է երթայ ձրի շորս օր աշխատի: Եւ այսպէս շատ մը փողոցներէ եւ խանութներէ բռնուած 50, 100, 150 անձերու խուճաբ, վզերնին ծռած, վայրագ ոստիկաններու գաւազանին առջեւ, սպանդանոց գացող ոչխարներու նման կը լեցուին կեղորոնական ոստիկանատունը:

Հոն նոր արարուած: Սէր-Թահսիլտար խենդ Մահմուտ պէյ (կուսակալին սիրելին), հարիւրապետ Հասան, եւ Պագի շունները իրենց արբանեակներովը շրջապատուած կը սկսին պոռալ:

— Օրա՛ն քեաֆիլիլի Տեմուր եօլու վերիլ:

Ով որ վրան դրամ ունի առանց բերանը բանալու անմիջապէս կը վճարէ, իսկ որոնք որ չունին մինչեւ իրիկուն կը բանտարկուին պահականոցին ախոռին եւ ամխատան մէջ. ձեծը կուտեն, իրենց կրօնքին եւ պատուին ամէն անարգանք կը լսեն, եւ երբ մինչեւ իրիկուն ստակ չհասնի իրենց, կը յանձնուին վայրագ ոստիկաններու ընդջայ գերիներու խումբը մինչեւ Տէմիր Եօլուն պիտի տանին: Ճանապարհին ալ հայհոյութիւն շմար որ անոնց գլխուն չտեղան ոստիկանները եւ հարուածներ չիջեցնեն:

« Քեաֆիլիլի եալաշ կիտիլ » եւ՝ հարուած, « խընդիլիլի կիլի կիլիլիլ » եւ՝ հարուած,

« Թերեայեր տաղըրևայրն » եւ՝ հարուած,
 « Տեօվէր դայինդարը հէրի գարևայրն » եւ՝ հարուած,
 ու միշտ հարուած. և հարուածով հարուածով կը հասնին
 մինչեւ Տէմուր եօլուն :

Հոս արարուածը կը փոխուի : Հիմակ կարգը երկրա-
 շափին եւ իր պահապան ոստիկաններունն է : Ով որ քիչ
 մը ստակ ունի եւ ճարպիկ է ու կրնայ կաշառել երկրաշա-
 փը, անոր գործը կը յաջողի : Իսկ եթէ ոչ չորս օր ձրի
 գործելէն և հազարումէկ անգամ ոտք պագնելէ յետոյ հա-
 զիւ թէ կը յաջողի երկրաշափէն պատառ մը թուղթ առ-
 նել եւ վերագառնալ քաղաք : Սակայն այդ թուղթը ինք-
 նին անարժէք է, պէտք է զայն ուրիշ պաշտօնատուն մը
 տանիլ և կնքուած թուղթ մը առնել. ու ասոր համար ալ
 նորէն գրամ տալու է :

Խեղճ մարդը սակայն դեռ չէ ազատուած. լման շունչ
 մը տակաւին չքաշած, ահա իր թաղի մուխթարն է որ
 ոստիկան մը հետը առած, գլխուն վրայ կը տնկուի : Թէ-
 մէթթիւի տուրքն է,— շահու տուրքը— որ կը պահանջէ :
 Ինչ վաստակած է որ ինչ վճարէ : Բայց որո՞ւ հասկցնել :
 Հարկ է որ ոստիկանին առջեւ իյնայ, երթայ ասոր անոր
 խանութին առջև եւ հազարումէկ աղաչանքով 10—20
 դուրուչ փոխ առնէ. և մուխթարին բերանը գոցելէն յետոյ
 իր բերանը բաց, շունչը տունը կ'առնէ :

Հոն կը հանգստանայ : Ահա ողորմագին տեսարա-
 նը : Չաւակները որոնք չորս օր է հօրերնուն կը սպասէին
 կէս—անօթի, ճըւալով շուրջը կը բոլորուին, եւ արտաս-
 ուախան ուրախութեամբ « հաց, հաց բերի՛ր մեզի, Տա-
 տա » կ'աղաղակեն : Մարդը որ քիչ մը իր նեղութիւնները
 պիտի մոռնար զաւակներուն քով, ահա այս զարհուրելի
 իրականութեան հանդէպ կը շուարի կը մնայ, սիրտը կ'ա-
 րիւնտտի, եւ աչքերը վեր վերցնելով « Աստուած, ա՛ն սա
 հոգիս, ազատի՛մ » կ'աղաղակէ, ի խորոց սրտէ հառա-
 չելով :

ՕՐԱԳՐՈՂԻ ՅԻՇՈՒՄՆԵՐ

Սուլթան Համիտ օգոստոս 31ին իր գահակալութեան
 քօնակահինգ ամեակը պիտի տօնէ : Յոբելեան հանդէսնե-
 րը կը կատարուին որոշ շրջանի մը վերջին տարուան վախ-
 ճանին, եւ ոչ թէ այդ տարուան սկզբնաւորութեանը : Հա-
 րիրամեակ մը կը տօնուի երբ հարիւր տարիներ ամ-
 բողջապէս բոլորած են : Սուլթան Համիտի գահակալու-
 թեան քօնակահինգամեակը կը լրանայ 1901 օգոստոս
 31ին, ուստի դեռ տարի մըն ալ համբերելու պէտք ունէր :
 Բայց թերևս նախագագցում մը իրեն կը թելադրէ թէ

յառաջիկայ տարին լրացնելու կարող չըլլայ : Սուլթա-
 նին գահակալութեան տարեդարձը մտքիս մէջ տխուր յի-
 շատակներ կ'արթնցնէ : Կը յիշեմ օրագրութեան վրայ ի
 գործ դրուած ճնշումը սուլթանը փառաբանող յօդուած-
 ներ հրատարակել տալու համար : Ատեն մը երբ Թիւր-
 քիոյ մամուլը ըստ բաւականին ազատ էր, սուլթան-
 ներու ծնունդի գահակալութեան տարեդարձները օ-
 րագրական գովաբանութեանց բարեղէպ—կամ շարագէպ—
 առիթներ չէին համարուեր : Ժողովուրդները եւ իրենց
 հետ ալ մամուլը որքան աւելի ճնշուեցան բոնապետա-
 կան լուծին ներքև, իրենց գլուխն ալ խոնարհեցնելու հար-
 կը այնքան աւելի պարտաւորիչ եղաւ : Ստորնացումը
 կարգ մը թերթերու համար ծանր դժբաղդութիւն մը չհա-
 մարուեցաւ : Որոնց համար որ օրագրութիւնը պարզ խա-
 նութ մըն էր, շողոքորթութիւնն ալ շահաւոր առեւտրա-
 կան նիւթ մը եղաւ : Բայց զաղափարի ծառայող, նպա-
 տակի նկրտող խմբագիրներու համար դժնդակ հարուած
 մըն էր տարին երկու երեք անգամ խոնարհելի, նոյն իսկ
 առերևոյթս. բայց ինչպէս որ հիւանդ մը իրեն անախորժ
 դառն զեղեր առնել կը պարտաւորուի որպէս զի կարենայ
 ապրիլ, նոյնպէս Պոլսոյ գրողներէն ոմանք ալ յանձնա-
 ռու կ'ըլլային տարին երեք չորս օր դառնահամ զեղհատ
 մը կ'ըլլէ որպէս զի 360 օր ալ կարենան ազդին սրտին ու
 մտքին վրայ իշխել :

Սուլթան Համիտի գահակալութենէն մինչեւ եօթ ութ
 տարի Պոլսոյ մամուլը չքանապատուեցաւ որոշեալ օրեր՝
 այսինքն սուլթանին ծնունդին եւ գահակալութեան տա-
 րեդարձներուն՝ դրուատական յօդուածներ հրատարակել :
 Չեմ կարող ճիշտ ու ճիշտ յիշել թէ այդ բոնաբարիչ պար-
 տականութիւնը երբ սկսաւ : Արևելք 1884ին հիմնուե-
 ցաւ, առանց ո՛ր և է դրուատականի կ'անցընէր օգոստոս
 31ը, եւ սուլթանի ծնունդի արաբական շարժուն թուա-
 կանը : Չեմ պիտեր թէ 85ին էր թէ 86ին էր որ վարչու-
 թեան անդամներէն մէկը պէտք տեսաւ քանի մը տող հը-
 րատարակել տալ գահակալութեան դարեդարձին առթիւ :

Արևելքի երկրորդ երեսը, ներքին լուրերու բաժնին
 մէջ տաս քսան տողով մը թերթին խմբագրութիւնը կը
 շնորհաւորէր սուլթանը իր գահակալութեան այսքան եր-
 րորդ տարեդարձին առթիւ : Չեմ գիտեր թէ ուրիշ թեր-
 թեր ինչ կ'ընէին : Սուլթանը զեռ այդ ատենները մեզի
 համար արտակարգ կարեւորութիւն մը չունէր, և իրմով
 զբաղելու հարկին մէջ չէինք : Իսկ ես երբ Մասիսը կ'առ-
 նէի, բնաւ սուլթանին գովաբանական յօդուած մը հրա-
 տարակելու հարկին մէջ չէի գտնուեր. ու ոչ ոք զիտո-
 ղութիւն կ'ընէր : Երբ 1890ի դէպքերէն յետոյ մեր գատը
 պիտի տեսնուեր, Ամբաստանիչ ատենին տեղեկագրին
 վրայ, իմ փաստաբաններս՝ Գրիգոր Զօհրապ եւ հանգուց-
 եալ Աղեքսանդր Մերիէմ—Գուլի ուզած էին Մասիսի հա-
 ւաքածոյներէն այնպիսի յօդուած մը գտնել որ իրենց
 ձեռքը պաշտպանողական փաստ մը ըլլար. բայց անկա-

րելի եղած է այդ գիտը ընել: Այնպիսի թուականներ էին որ կրնայինք թիւրբիոյ էն շերմ հակառակորդներուն՝ որպիսին էր Գրիգոր Արծրունի՝ գրուատական կենսագրութիւնը հրատարակել Մասիսի մէջ:

Ժամանակը բոլորովին փոխուած գտանք երբ 1891 յուլիսին Հայրենիքը հիմնուեցաւ: Առաջին թիւէն հարկ եղաւ համակերպիլ արդէն հաստատուած սովորութեան մը: Մեր թշնամիները ներքին էին. Հայրենիքի երևումը յանկարծակիի բերած էր գիրենք, եւ տարակոյս չունէինք որ առիթէն անմիջապէս պիտի օգտուէին, եթէ հաստատուած սովորութիւնը ոտնակոխ ընէինք, նոր թերթը Երլորզը մատնանիշ ընելով զայն խափանել տալ: Այս տարրական խոհեմութիւնը իսկ ամուր պատուար մը չեղաւ. Հայրենիքի հազիւ թէ 28 թիւերը հրատարակուած էին եւ ահա հայ մեծատուններու միջնորդութեամբ նորաձիւ թերթը անպայման ժամանակով խափանուած կ'են, խարկուէր: Առիթը բարեպատեհ էր սակայն. օգոստոս 31ը անցուցինք: Գահակալութեան տարեգարձը սօսնելու պիտութիւն չէինք կրնար ունենալ խափանեալ վիճակի մէջ:

Նախարարական փոփոխութիւնը սեպտեմբերի սկիզբը դիրացուց Հայրենիքի վերաբացումը: Երկու ամիս վերջը սակայն, նոյեմբերի վերջերը, դարձեալ անպայման դադարուածի կը դատապարտուէինք Նուրեանի բարեխօսութեամբը: Շատ գծուարութիւններէ յետոյ թերթը վերաբացուեցաւ դեկտեմբեր 28ին: 1892ին՝ սուլթանի ծրնունդին տարեգարձը մարտի 6ին կ'իյնար, արաբական թուականով. Հայրենիքը այդ օրերը փակուած չէր: Մանր կացութեան մէջ կը գտնուէինք: Պատրիարքը, ժողովականները, մեծատունները, էֆէնտիները, բոլոր անոնք որոնց հանգստութիւնը խռովեալ էր, ազնուամիտ պաշտօնակիցներ որոնք շատ նեղացած էին 10 փարանոց Հայրենիքէն, ամէնքն ալ դարանակալ կը մնային մեզի: Թերթը քանի մը ամսուան մէջ իր երկու անգամ երկամսեայ դադարումովը արդէն կառավարական շրջանակներուն մէջ շատ գէշ համբաւ մը շինած էր: Սուլթանին ծնունդի տարեգարձին օրը ուրեմն շատ զգուշ խոհեմութեամբ պարտաւոր էինք գրել: «Հակիթին մէջ մազ փնտռել» որ կ'ըսեն մեր պարագան էր: Մեր խոհեմութիւնը սակայն նոր փակումէ մը չփրկեց մեզի. շարժմը մը ետքը, մարտ 13ին, դարձեալ Եռուսէֆ աղան, հոգեառ Ագրայէլնիս, կը անկուէր Հայրենիքի խմբագրատունը, իրիկուան ժամը 11ին, մինչ թերթը սրբագրուելու վրայ էր: Նորէն դադարում անպայման ժամանակաւ: Այս անգամ փակումը տեւեց ճիշտ չորս ամիս: Այսպէս ահա նոր հիմնուած թերթ մը մէկ տարուան շրջանին մէջ երեք անգամ փակումի կը դատապարտուէր, համազումար՝ վեց ամիս գադարում: Կարելի չէ հաշուի առնել այն բոլոր նիւթական կորուստները որոնց ներքեւ կ'ընձուէր թերթին հիմնադիր-տնօրէնը, այն բոլոր տառապանքները

զոր ամէնքս ալ կը կրէինք, եւ մանաւանդ այն հոգեկան տազնապը որ այդ տխուր օրերուն մէջ մեզի կը մաշեցներ:

Հայրենիք 1892 յուլիս 6էն յետոյ մինչեւ իր ջրնջումը, 1896 յուլիս, երեք անգամ եւս փակուեցաւ: Վերջին փակումը տեւեց հինգ ամիս: Հաշուի չեմ առնել արգարազիրները, եւ կամաւոր փակումները, այսինքն՝ գրաքննութեան յարուցած արգելքներուն պատճառաւ թերթը հրապարակ չհանելու հարկը: Բայց ետքի փակումները, մինչև 1895 դեկտեմբեր 28, չզուգադիպեցան սուլթանի տարեգարձներուն, հետեւաբար պարտաւորիչ յօդուածներ գրելու հարկին մէջ էինք:

Սակայն ըսեմ թէ այդ յօդուածները անտարբերութեամբ կը խմբագրէինք առանց արտակարգ նողկանք մը զգալու: Սուլթան Համիտ մինչեւ Սասունի կոտորածը Հայոց համար տարօրինակ սուլթան մը չէր. իր նախորդներէն ոչ աւելի աղէկ էր, ոչ ալ աւելի գէշ: Հակահայկական, կամ թէ հակաքրիստոնէական, քաղաքականութիւնը երկրին կառավարական սկզբունքն էր, եւ կը գործադրուէր նախորդ սուլթաններուն օրով ալ, ինչպէս ակնբեր կը տեսնուի այս էջերուն մէջ հրատարակուած պատմական տեղեկութիւններէն: Իսկ Սասունի կոտորածէն ետքը, Հայկական խնդիրը ուժգին ծագեցաւ, ազգային բերկրութեան թուական մը եղան 1894ի վերջի ամիսներէն մինչեւ 1895ի վերջին ամիսները: Ինչպէս երջանիկ անհատները, նոյն եւ երջանիկ ժողովուրդները որտեղնուն մէջ մեծկակ տեղ մը չեն պահեր ատելութեան: Հայ ազգը գրեթէ ամբողջ տարի մը ինքզինքը երջանիկ զգաց, և երբ երկու անգամ այդ ժամանակամիջոցին հարկադրուեցանք սուլթան Համիտին տարեգարձները սօսնել, եւ ոչ իսկ ո՛ր և է կարեորութիւն կ'ընծայէինք մեր գրածներուն: Ու երբ սեւ օրերը եկան, արդէն Հայրենիք այլ եւս գոյութիւն չունէր. մեր կոտորածներուն մեր գրիչներն ալ կոտորուէր, ջախջախուէր էին Պոլիս:

Այդ յօդուածներուն խմբագրութեան համար ահեղ ձանձրոյթ մը կը զգայինք: Տարին երկու անգամ ի՞նչ հընարիլ: Պոլիս ապրող օրագրապատներու մտատանջութիւնը շատ ծանր ըլլալու է այս միջոցիս: Տասնը հինգ տարի է որ դատապարտուած են տարին երկու անգամ փաստերով ապացուցանել թէ սուլթան Համիտ օսմանեան կայսրութիւնը երջանիկ վիճակի հասուցած է: Եւ հիմակ այս յոբելեանը ի՞նչ պէտք է ներշնչէ իրենց:

Ընդունինք սակայն թէ հայ թերթերը միշտ չափաւոր եղած են զովաբանութեանց շոյալումի մէջ, յայն մասունքն ալ գրեթէ հայկականին նմանած է: Բայց թիւրք թերթերը իրենց շոգոքորթութեանց ոչ չափ մը դնել գիտեն, ո՛չ սահման մը. իսկ Պոլսոյ երոպական լեզուներով հրատարակուած թերթերը պարզապէս զարշանքի պատկանդարաններ կը դառնան այդ երկու տարեգարձներու օրերը:

Ա. Ա.

ԼՈՒՐԵՐ

ՍՊԱՂԱՆՔԻ ԿՈՏՈՐԱՆԸ. Թայվիկ Պոլսէն կը հեռագրուի. սուրբանը հրաժարեցոց Պիրլիսի զինուորական հրամանատար Ալի փաշան, եւ անոր հրամայեց վերադառնալ Երզնկէն իր զօրաբանակը: Յանձնաժողով մը քննարկելն պիտի կատարէ Սպաղանքի ամբողջ գործին վրայ: Սասունի Հայոց երեւելիներն ու եկեղեցականները իշխանութեանց բողոք մը ներկայացուցին, յայտարարելով թէ Սպաղանքի բնակիչներուն կեանքն ու պատիւը ո՛ր է չարիք չեն կրած: — Տէլլի Բրանիլիսն ալ Պոլսէն կը հեռագրեն. Սասունի կոտորածին համար Դեսպանատունէն րը այլ եւս նոր ձեռնարկ պիտի չընեն, դեսպաններուն կարծիքն է թէ շատ անխոնձելութիւն պիտի ըլլայ Հայկական խնդիրը այս պահուստ յարուցանել:

Վերջին պահուն կը հաղորդուի թէ Ռուսիայ դեսպանը շատ ծանր դիտողութիւններ ըրած է Իրան: Յայտարարած է թէ սուրբանին գահակալութեան յոբելեանին նախընթաց օրը այսպիսի կոտորածի մը յուրը ամենագեղ տպաւորութիւն մը պիտի բողոք: Դեսպանատունը Էրզրումի հիշատակին հրահանգ զրկած է որ մանրամասն տեղեկագիր մը հաղորդուի իրեն Սասունի նոր շարդին վրայ:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՍՈՐՍՈՓԸ. Ուսկերքօ քաղաքին սպաննութիւնը եւ Եանին դէմ եղած փորձը սուրբանը բողոքովին անոռասրափի մատնած են: Երլոզի պարտեզը պտրտած ատեն մարեր ինկեր է: Ստիկանութիւնը ծայրայեղ խստութիւններ ի գործ կը դնէ եւրոպացիներուն դէմ ալ: Երլոզը աշխատող իտալացի բանուորները գրեթէ ամենքն ալ ձամբուներ են: Պոլիս Նաշահանգստին հսկող ստիկանութեան պետը վերջերս բոլշատրած էր երկու իտալացիի ցանաք ելլել, առանց անցագրի. շոգենաշային ընկերութեան գործակալութիւնը հաշատած ըլլալով թէ անոնք վերին աստիճանի պատշառ մարդիկ են. սուրբանը եղելութիւնը իմանալով բանտարկել կոչուայ ստիկանապետը եւ պաշտօնակն կ'ընէ: Բերս Բաշիս Օրեյին վարչութիւնը Բերայի քաղապետական պարտեզները վարձելով, կիրակի օրերը հեծելաբաններու մրցում մը հաստատած էր: Երեք անգամ մրցումը տեղի ունեցեր է շատ յարողութեամբ, բայց չորրորդին արգիլուեր է, վասն զի հաւաքումներ բոլշատրած չեն:

ՎԱՆԻ անգլիական դեր-հիշատոս հագարապետ Մոնուրլ որ ուղեւորութեան մը համար Վանէն մեկնած էր, ձամբան Բիւրտեքէն յարձակում կը կրէ, իր մար-

դիկը կը փախչին, քարգմանը կը վիրաւորուի, դեր հիշատոսին գոյքերը կը գողցուին: Կ. Պոլսոյ անգլիական դեսպանը կը բողոքէ, եւ թիւրք կ'առաջարկութիւններ յանձնարենքը փնտրելու վրայ է:

Անգլիական թերթերը այս յոշորը օգոստոս 13 քրականով ստացած են Պոլսէն. սակայն ուրիշ աղբիւրներէ հասած տեղեկութիւնները կը հաշատեն թէ անգլիական դեր հիշատոսը Պոլսոյ դեսպանատունէն ստացած հրահանգին վրայ Վանէն Սասուն կ'երբար Սպաղանքի կոտորածին քննարկներ համար: Երլոզին Վանի կոչակալին դրկումը հրամանին համեմատ դեր-հիշատոսը քրդական յարձակումի մը կ'ենթարկուի:

Այս առիւթ պետք է յիշել թէ Տիւրքիսթիի Տրանսական դեր-հիշատոսը երկու ամիս առաջ քրկնութեան պաշտօնով մը Ալիքասնտեր գացած պահուն յարձակում կրեց Բիւրտեք մը, որ անպատիժ մնաց, հակառակ ֆրանսական դեսպանին բողոքներուն:

ԽՈՐՐԵՐԻ սոչուական հիշատոսարան մը հաստատել որոշուեր է:

ՍՈՒԼԹԱՆԻՆ ՅՈՐԵԼԵՆԸ. Կ. Պոլսէն կը հեռագրեն թէ Իտալիոյ քաղաքորը սուրբանին գահակալութեան քսանեւեկագամակը շնորհաւորելու համար Պոլիս մասնաւոր պատուիրակութիւն մը պիտի դրկէ, որուն գլուխը պիտի գտնուի ծովակալ Ալեքի եւ քաղաքական քիկնապահ մը: Գերմանիոյ կայսրն ալ իրեն յատուկ ներկայացուցիչ պիտի դրկէ Ֆոն Ռիքթիլ զօրավարը որ տասնեակերորոյ զօրաբանակին հրամանատարն է եւ հիմակ Քօպրիկ կը գտնուի: Ինչ որոշ կերպով չգիտցուի թէ միշտ պետութիւնները ինչպէս պիտի մասնակցին: Սպանիոյ կ'առաջարկութիւնը հաղորդած է թէ լոկ շնորհաւորական նամակի մը առարքունը քաղական պիտի նամակի:

ՀԱՍՅԷ ԵՒ ԲԱԺՆԵՐԻՆ

~~~~~

ՆՈՐ ԿԵԱՆՔԸ կը հրատարակուի ամէն ամսու 1 ինչու 13 ինչ: Բաժնեգիրն է Երոպայի համար տարեկան 10 եւ վեցամսեայ 5 ֆրանք, Ամերիկայի համար տարեկան 2 ու վեցամսեայ 1 տոլար:

ՆՈՐ ԿԵԱՆՔԻ վերաբերեալ նամակ ու բաժնեգիր զրկել ա՛մ:

L. FRANK,  
27, CHESTERTON ROAD,  
(ENGLAND) LONDON, W